

ՆՈՌ ԳՈՐԻՍ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄՐԱՏԱԵՒ ՀԱՅՈՑ ԹԵՄ

ԺԲ ՏԱԻԻ, ԹԻՒ 104, ՄԵՂՏԵՄԱԲԵՐ-ՀՈԿՏԵՄԱԲԵՐ 2014



350-ԿԱՄԵՐԱԿ

ՆՈՐ ԶՈՒՂԱՆ ԶԵՐՄՕՐԷՆ ԴԻՄԱԻՈՐԵՑ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՏԻՄՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հոկտեմբերի 18-ի երեկոյեան, Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակին նկատմամբ միջոցառումներին մասնակցելու ու նախագահելու նպատակով, Սպահան ժամանեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանի, նոյն թեմի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Մակար եպս. Աշգարեանի եւ գաւազանակիր հոգշ. Տ. Նշան արք. Լախոյեանի:



Վեհափառ Հայրապետին Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքի մուտքի մօտ դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթեանը, Շահինշահիի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, քահանայից եւ դպրաց դասերը, թեմի ազգային մարմինների ու շրջանի Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչները:



Սկզբում Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետն օրհնելով աւանդական աղ ու հացը, որը մատուցեց Նոր Զուղայի տարազով զգեստաւորած հայուհին, վաստակաւոր ազգայինների միջոցով պահուղ ամպիովանիի ներքոյ եւ եկեղեցու զանգերի հնչումով, ժողովրդի ծափողջոյններով ու Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախմբի միջոցով կատարուող «Հրաշափառ» շարականի ներքոյ, անցաւ պատուի առած սկաւտների շարքերից եւ մուտք գործեց վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի, որտեղ կատարեց կանոնական աղօթքը:

Ապա Արամ Ա Կաթողիկոսը մօտեցաւ Մեծ եղեռնի բիրաւոր նահատակների յիշատակը յաւերժացնող յուշարձանին եւ ծաղկեպսակ գետեղեց այնտեղ, որից յետոյ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը: Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնելով Արամ Ա Վեհափառի շնորհաբեր այցելութեան կապակցութեամբ՝ կարեւորութեամբ անդրադարձաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Վեհափառ Հայրապետի կողմից իրականացող միջազգային մակարդակի աշխատանքներին:



Ողջոյնի խօսքին յաջորդեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի հայրապետական օրհնութիւնն ու պատգամը: Վեհափառ Հայրապետը նախ իր ուրախութիւնը յայտնեց Ս.Ա. Վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակը թեմի ժողովրդի հետ միասնաբար նշելու կապակցութեամբ, ապա, շարունակութեան մէջ, դրաւ տանքի խօսք ուղղելով սոյն եկեղեցին կառուցողներին եւ երկար տարիների ընթացքում այն պայծառացնողներին, կարեւորութեամբ շեշտեց, որ անցեալին նայելուց եւ նրանով հպարտանալուց բացի՝ անցեալով հզօրացած ու վերակենսաւորած, վերանորոգ հաւատքով ու ներումով պէտք է քայլենք դէպի լուսաւոր ապագայ:

Վեհափառ Հայրապետն իր խօսքի երկրորդ բաժնում անդրադառնալով Հայոց Յեղասպանութեան

Շարունակութիւնը՝ 7-րդ էջում

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ



Կիրակի՝ 2014 թվականի հոկտեմբերի 19-ի առաւօտեան, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան գերշ. Տ. Մակար եպս. Աշգարեանը:

«Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակի կապակցութեամբ, ապա վկայակոչելով Սուրբ Գրքի հաստատումները, կարելորութեամբ շեշտեց քրիստոնեաների՝ Աստծու որդեգիրները լինելու իրականութիւնը եւ նշեց, թէ ինչպէ՛ս մարդ պէտք է իր ամբողջ կեանքի ընթացքում, համաձայն Տէր Յիսուս Քրիստոսի պատվիրանների, ընթանայ ուղիղ եւ ճշմարիտ ճանապարհով՝ Աստծու հետ լինելու եւ մնալու, եւ երկնային արքայութեան մէջ մուտք գործելու շնորհիբն արժանանալու համար:



Արարողութեանը ներկայ էին Թեհրանի, Սպահանի եւ Ատրպատականի հայոց թեմերի առաջնորդ սրբազան հայրերը, Սպահանի հայոց թեմի հոգեւորականաց դասը եւ հաւատաւոր հայորդիներ: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:



Վեհափառ Հայրապետը Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու համայնական կեանքին ամենօրեայ մասնակցութիւն ունենալը, նմանին օգնութեան ձեռք երկարելը, տկարին, կարօտեալին, հիւանդին եւ զրկեալին գթառատ օժանդակութիւն ցուցաբերելը եւ Յիսուս Քրիստոսի ուսուցանած առաքինութիւնների մշտական կիրառումը, կարելոր հրամայական համարեց՝ Աստծու որդեգրութեան կոչումն արդարացնելու համար:

Շնորհագարդ Վեհափառ Հայրապետն արարողութեան ընթացքում «Ողջոյն»-ից անմիջապէս յետոյ, թափօր կազմած հոգեւոր հայրերի ուղեկցութեամբ, հանդիսատար մուտք գործեց եկեղեցի եւ քարոզի պահին իր հայրապետական պատգամը փոխանցեց ներկաներին:

Արամ Ա Կաթողիկոսն իր քարոզի սկզբում ողջունեց ներկաներին եւ բոլորին շնորհաւորեց Ս.Ա. վանքի

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ



Հոկտեմբերի 19-ի ճաշայ ժամը 12:10-ին, շնորհազարդ Վեհափառ Հայրապետն իրեն ընկերակցող հոգևոր հայրերի հետ միասին այցելեցին Նոր Զուղայի ազգային ծերանոց, որտեղ նրանց դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի անդամ՝ պրն. Վարուժ Մովսիսեանը, Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան եւ միութեան այլ անդամուհիները, ծերանոցի պաշտօնէութիւնն ու աշխատակազմը եւ ծերանոցի մեծայարգ բնակիչները:

Այստեղ ծերանոցի յարկի տակ գտնելու կապակցութեամբ եւ շեշտեց տարեցների նկատմամբ իր ունեցած յարգանքի ու մեծարանքի մասին:



Զերմ եւ մտերմիկ ընդունելութեան սկզբում, միութեան վարչութեան նախագահուհի՝ տկն. Արմինէ Սիմոնեանը, բարիգալստեան խօսք ուղղելով Վեհափառ Հայրապետին եւ նրան ընկերակցող պատուիրակութեանը, համառօտ ակնարկ ունեցաւ միութեան պատմականի ու գործունէութեան մասին, այնուհետեւ անդրադառնալով Վեհափառ Հայրապետի կողմից 2014 թականը «Տարեցների տարի» հռչակելու հանգամանքին, զեկուցեց թէ միութիւնն ստանձնել է տարին արժեւորելու պատասխանատւութիւնը:

Վեհափառ Հայրապետն ակնարկելով հայոց պատմութեան անցած ուղուն եւ հայութեան ապրած ծանր ու դժարին պահերին, ճակատագրական նկատեց հայ հայրերի եւ մայրերի անգնահատելի ու անփոխարինելի դերը՝ այդ ամբողջ դժարութիւնները յաղթահարելու, ինչպէս նաեւ նոր սերունդներին հայեցի ու քրիստոնէական ճիշտ դաստիարակութիւն տալու յոյժ կարեւոր գործում, որի համար նրանց մշտական խնամքի, գուրգուրանքի եւ յարգանքի արժանի համարեց:

Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարզէն եպս. Չարեանը ներկաների համար բացատրեց ազգային ծերանոցի նկատմամբ ազգային իշխանութեան տածած ուշադրութիւնն ու խնամատարութիւնը, նրա ցայտուն փաստը համարելով Վեհափառ Հայրապետի այցելութեան կազմակերպումը՝ ծերանոց:

Մթնոլորտն առաւել ջերմացաւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի՝ մայրերին ձօնած, տկն. Ռիթա Մկրտչեանի՝ Վեհափառ Հայրապետին ներած, եւ ծերանոցի բնակիչ պրն. Խորէն Թահմազեանի «Կուունկ ուստի՞ կուգաս» երգերի կատարումներով:

Ն.Ս.Ս.Ս. Արամ Ա Կաթողիկոսն իր ուրախութիւն:

Վերջում Արամ Ա Կաթողիկոսը եւ նրան ընկերակցող հոգևոր հայրերը յիշատակի համար հաւաքական լուսանկարեցին ազգային ծերանոցի բնակիչների, աշխատակազմի եւ միութեան անդամուհիների հետ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՏԻՖԻԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Կիրակի՝ 19 հոկտեմբերի երեկոյան ժամը 7-ին, առաջնորդահաստ Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետը ընկերակցութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանի եւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս Չարեանի, հանդիպում ունեցաւ Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների եւ Հաշտեքնիչ մարմնի անդամների հետ: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Իրանի իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը:



Հանդիպումն սկիզբ առաւ «Տէրունական» աղօթքով, որից յետոյ Սպահանի հայոց թեմի անունից թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը բարի գալստեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ Նոր Զուղա կատարած այցելութեան առթիւ: Այնուհետեւ արտայայտեց թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետ Վարուժ Մինասեանը, ով նույնպէս բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին, յանուն թեմի ազգային մարմինների խոստացաւ, որ թէ բարոյապէս եւ նիւթապէս նեցուկ են հանդիսանալու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեանը՝ Սիսի կաթողիկոսարանը վերադարձնելու ուղղութեամբ Թուրքիայի Սահմանադրական դատարանում դատ բացելու գործում:



Յաջորդիւ, ելոյթով հանդէս եկաւ Թեմական խորհրդի ատենապետ Նուէլ Մինասեանը, ով շնորհակալութիւն յայտնելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառին թեմիս հրաւերն ընդառաջելու եւ Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեա-

կի միջոցառումներին մասնակցելու համար, կարեւորութեամբ ընդգծեց Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմից՝ յանձնին Վեհափառ Հայրապետի իրականացուող ամուր եւ բարձր մակարդակի ղեկավարութիւնը, որը ոչ միայն արտացոլում է եկեղեցական, այլեւ ազգային-հասարակական կեանքում ու Հայ դատի աշխատանքներում:



Ներկաներին իր հայրապետական օրհնանքը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը գնահատելով թեմիս ազգային իշխանութեան կողմից իրականացուող աշխատանքները՝ ի մասնաւորի երիտասարդ ընտանիքների համար բնակարաններ կառուցելու ծրագիրը, կարեւորութեամբ շեշտեց. «Մեր եկեղեցին միայն կառույց եւ աղօթավայր չէ, այն իր կոչումով եւ էութեամբ ժողովրդին ուղղած ծառայութիւն է: Եկեղեցու սրբութիւնը բարի մէջ չէ: Եկեղեցու մեծութիւնն ու հզօրութիւնն իր ծառայութեան մէջ է եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնն այս գիտակցութեամբ է կազմւել»:

Վեհափառ Հայրապետն իր խօսքի շարունակութեան մէջ Կիլիկիոյ կաթողիկոսութեան կարեւոր առաջնահերթութիւններից համարեց երիտասարդութիւնը եւ յորդորեց երիտասարդութեանը մղել դէպի հայկական կառույցներ: Նա կաթողիկոսութեան առաջնահերթութիւններից համարեց նաեւ կրօնական դաստիարակութիւնը եւ մասնագիտացած ու հայութեանը ծառայող անհատների պատրաստութիւնը:

Շարունակութիւնը՝ 7-րդ էջում

շաճ հանդիսութեամբ, այն անանել է «Ս. Ներսէս Ընորհալի»:



Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի որոշումով եւ հանգուցեալ աստղագէտ Ալեկուշ Տէրեանի կտակած նիւթական միջոցներով, «Ս. Ներսէս Ընորհալի» գրադարանը հիմնական նորոգութեան ենթարկեց 2014 թուականին, համալրեց արդիական-համակարգչային համակարգով եւ նորովի կազմեցին ու թւայնացեցին գրքերի ցուցակները:

«Ս. Ներսէս Ընորհալի» գրադարանում նոր բաժին է նախատեսել մատաղ սերնդի ընթերցանութեան համար, նաեւ ստեղծել է ծրագիր-կայքէջի առցանց հնարարութիւն, որը գրադարանի գրքացանկից եւ Հայաստանի հանրապետութեան Ազգային գրադարանի թւայնացած գրքերից օգտուելու հնարարութիւն է տալու ցանկացողներին:



Յատկանշելի է, որ տարիների գրադարանավար հանգ. Լեւոն Մինասեանի անունը անմահացնելու եւ գրադարանում նրա թողած վաստակն ու աւանդը յանդիմանելու նպատակով, ժամանակի Թեմական խորհրդի որոշմամբ, գրադարանի ընթերցասրահը կոչւել է նրա անամբ:

Շարունակութիւն 1-ին էջից

ՆՈՐ ԶՈՒՂԱՆ ԶԵՐՄՕՐԷՆ ԴԻՄԱՌՐԵՅ...

100-ամեակին, յայտարարեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը՝ որպէս հայ ժողովրդի պահանջատիրական կամքի թարգման, պատմութեան մէջ առաջին անգամը լինելով, դատ է բացելու ցեղասպան Թուրքիայի դէմ՝ Սիսի կաթողիկոսարանը հայ եկեղեցուն ու հայ ժողովրդին վերադարձնելու պահանջով:

Վերջում ներկայ հոծ բազմութիւնը խուճկեցին շարքեր կազմեց վանքի «Խաչատուր Կեսարացի» անան թանգարանի մուտքի մօտ՝ Վեհափառ Հայրապետի աջն առնելու համար:



Շարունակութիւն 4-րդ էջից

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ...

Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսն իր պատգամի մի այլ բաժնում անդրադառնալով Սիսի կաթողիկոսարանի վերադարձնելու ուղղութեամբ դատ բացելու առնչութեամբ վերջին երեք տարիների ընթացքում իր կողմից իրականացած հանդիպումներին, խորհրդակցութիւններին եւ փաստերի հայաթապածան աշխատանքին՝ արտաստեց. «Այս դատը յաջողելու կամ ձախողելու երկու պարագներում եւս յաղթանակը հայ ժողովրդինն է լինելու, քանի որ այսպիսով Հայ դատն իրաւական դաշտ է փոխադրւելու եւ թուրք ցեղասպանին ապացուցւելու է, որ 100 տարիներ անց հայ ժողովուրդը մնացել է նոյն իրաւատէրն ու պահանջատէրը»:

Հանդիպման երկրորդ բաժնում Վեհափառ Հայրապետն սպառնալիք պատասխաններ տուեց ներկաներին յուզող հարցերին եւ ունկնդրեց նրանց տեսակէտները՝ ազգային աշխատանքների տարբեր ոլորտների կապակցութեամբ: Երեկոն ասարտեց Վեհափառ Հօր «Պահպանիչ» աղօթքով:

ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ
ՇԱԿԻՆՇԱԿԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ



Երկուշաբթի՝ 2014 թվականի հոկտեմբերի 20-ի յետմիջօրէի ժամը 5:15-ին, «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու տօնի եկեղեցական արարողութիւնից առաջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսին ներկայացան Շահինշահիի հայ համայնքի վարչութեան, մարզա-մշակութային եւ կանանց միութիւններից, դպրոցներից, երգչախմբերից, պատգամատրական եւ եկեղեցական ներկայացուցիչներից բաղկացած պատուիրակութիւնը:

Հանդիպման սկզբում Շահինշահիի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց պատուիրակութեան անդամներին եւ այցելութեան նպատակը: Հոգշ. Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց Արամ Ա Կաթողիկոսին առ այն, որ թէեւ Նոր Զուղա այցելութեան ժամանակացոյցի յագեցած լինելու պատճառով, հնարաւոր չէղաւ նրա այցելութիւնը Շահինշահիի հայ համայնք, սակայն առիթ ընձեռնեց, որպէսզի Շահինշահիի հայ համայնքի պատուիրակութիւնը ներկայանայ եւ ստանայ իր օրհնութիւնը:

շնորհակալութիւն յայտնեց նրանց:

Յաջորդիւ խօսեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը եւ մատնանշեց, որ Շահինշահիին իբրեւ Թեմի երկրորդ մարդաշատ համայնք միշտ ազգային իշխանութեան յատուկ ուշադրութեան առարկան է:



Շնորհագարդ Վեհափառ Հայրապետն իր գոհունակութիւնը յայտնեց Շահինշահիի կենսունակութեան եւ առաջընթացի մասին լսելով եւ յորդորեց բոլորին, որպէսզի առաւել ամրութեամբ կառչած մնան համայնքի կեանքին ու գոյութեանը եւ կրկնակի պատասխանատուութեամբ լծուեն ազգապահպանման աշխատանքներին:

Հանդիպման ընթացքում ներկաների կողմից հնչեցին խօսքեր Շահինշահիի հայ համայնքի դիմագրաւած դժարութիւնների ու կարիքների եւ համայնքի անդամների արտագաղթի հետ կապւած մտահոգութիւնների մասին, որոնց վերաբերեալ յոյս տրւեց, որ ազգային իշխանութեան մշտական հետեւողականութեամբ լուծումներ են տրւելու:

Հանդիպման աւարտին Շահինշահիի հայ համայնքի կողմից մի յուշանւէր յանձնեց Վեհափառ Հայրապետին:



Շահինշահիի հայ համայնքի վարչութեան ատենապետ արն. Մելքոն Ծիրանեանն ընդհանուր զեկոյց ներկայացրեց Շահինշահիի հայ համայնքի անցեալի եւ ներկայի մասին: Միաժամանակ նա ակնարկելով առաջնորդ Սրբազան Հօր եւ հոգշ. Հայր Սուրբի Շահինշահիի նկատմամբ տածած ուշադրութեանը, առիթը պատեմ համարելով համայնքի կողմից խորին

Ծրագիրն առաւել հարստացաւ Հայաստանի հանրապետութեան վաստակաւոր արտիստ, երգչուհի Աննա Մալիլեանի անգուգական կատարումներով: Հաղորդավարութիւնը կատարեց Ադրինէ Ղեւեանը, ով գեղարուեստական յայտագրից յետոյ բեմ հրաւիրեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանին:



Առաջնորդ Սրբազան Հայրը համառօտ ակնարկ ունեցաւ «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու շինութեան վերաբերեալ եւ շեշտեց հայութեան ինքնութեան պահպանման գործում նրա ունեցած դերակատարութեան մասին. նա իր հպարտութիւնը յայտնեց Սպահանի հայոց դարաւոր թեմի առաջնորդը լինելու համար, որով ի գօրու է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնը՝ հայ ժողովրդի գոյութեան ամրապնդման ուղիութեամբ ծառայութիւնը, ի կատար ածել: Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին բեմ հրաւիրեց ազգայիններ Վրէժ Տէր Մարտիրոսեանին, Գարեգին Մարկոսեանին, Հրայր Ծախնազարեանին եւ Ժորժիկ Աբրահամեանին (վերջինս՝ բացակայ), ապա Վեհափառ Հայրապետին՝ իր օրհնաբեր պատգամը փոխանցելու ներկայ բազմութեանը:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսն իր հայրապետական օրհնութիւնը բերեց ներկաներին՝ դրաստելով Նոր Զուղայի անցեալի ու ներկայի ունեցած աւանդը հալապահպանման գործում եւ շեշտեց. «Նոր Զուղան անցեալ չէ, այլ՝ ներկայ եւ ապագայ... Նոր Զուղայի պատմութեան մէջ Ս. Ամենափրկչեան վանքն իր առանցքային տեղն ու դերն է ունեցել. այս եկեղեցին իր կեանքով ու հաւատքի վկայութեամբ, 400 տարիներից ի վեր դարձել է կենդանի եւ կենդանարար ներ-

կայութիւն... Հետեւաբար, այսօր մենք տօնախմբում ենք Նոր Զուղայի համայնական կեանքը, որովհետեւ եկեղեցին ու ժողովուրդը դարձել է մէկ ամբողջութիւն»: Վեհափառ Հայրապետն իր խօսքի շարունակութեան մէջ անելացրեց. «Մենք այսօր նաեւ տօնախմբում ենք այս մէկ բուռ հողի վրայ 400 տարիներ շարունակ մշակոյթ կերտած մեր ժողովրդի գաւակների փառահեղ կեանքը... Մեր ժողովրդի կեանքի մէջ Նոր Զուղան նշանակում է մշակոյթ՝ բառի գերազանց եւ հարազատ իմաստով»:



Նորին Սրբութիւնն իր խօսքի մէջ անդրադառնալով ամենուրեք տարածւած գաղթի երեւոյթին, կոչ ուղղեց Իրանի իսլամական հանարապետութեան տարածքում ապրող բոլոր հայորդիներին՝ չլքել իրենց գաղութները՝ օտար երկրներ չելու համար: Նա յորդորեց՝ ամուր կառչած եւ հաւատարիմ մնալ սփիւռքի դարաւոր եւ հաստատուած համայնքներին, նշելով, որ հեռանալու դէպքում միայն դէպի հայրենի երկիր ներգաղթելու ճանապարհն է արդարացի:



Վերջում շնորհագարդ Վեհափառ Հայրապետը «Ասպետ»-ի շքանշանով պարգեատրեց բեմ հրաւիրուած ազգայիններ՝ Վրէժ Տէր Մարտիրոսեանին, Գարեգին Մարկոսեանին, Հրայր Ծախնազարեանին եւ Ժորժիկ Աբրահամեանին:

Ներկայ բազմութիւնն ուրախութեամբ ողջունեց շքանշանների տուչութիւնը, ապա ձեռնարկի աւարտին, Ս.Ա. Վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակի գործադիր յանձնախմբի միջոցով տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

դրա կարելուր ներգործությունը Իրան-Հայաստան երկու հարեան ժողովուրդների եւ երկրների յարաբերություններում:



Այնուհետեւ ակնարկելով հայերի բռնագաղթին ու Նոր Զուղայի հաստատուելուց յետոյ նրանց ձեռքբերումներին, ինչպէս նաեւ Նոր Զուղայի պատմական անցեալին, ընդգծեց ջողայահայութեան կարելուր դերը՝ Սպահանի եւ առհասարակ Իրանի տնտեսութեան, մշակոյթի, կրթութեան, հասարակական կեանքի եւ այլ ոլորտների զարգացման գործում: Իր խօսքերի այլ բաժնում պրն. Մինասեանը դրատանքի եւ երախտագիտութեան խօսք ուղղեց Իրանի իսլամական հանրապետութեան պատասխանատուներին, որոնք գիտակցելով մշակութային կոթողների պատմական արժէքը, ճիգ ու ջանք չեն խնայում դրանց պահպանման համար, մինչդեռ հարեան պետություններում Ադրբեջանում եւ Թուրքիայում, միտումնաւոր եւ ծրագրաւորաձ ոչնչացում են Հին Զուղայի եւ Արեւմտեան Հայաստանի հայկական յուշարձաններն ու անցեալի մշակութային գանձերը՝ դրանց հայկական պատկանելիութիւնը ոչնչացնելու նպատակով: Իր խօսքի աւարտին, Նոէլ Մինասեանն անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին եւ նշեց, որ քանի դեռ միջազգայնօրէն ճանաչում չի գտել եւ չի դատապարտուել Հայոց ցեղասպանութիւնը եւ Թուրքիոյ իշխանութիւններից չի պահանջուել ընդունելու այն, շարունակելու են նման ոճիրները, ինչի ականատեսն ենք այսօր՝ Միջին արեւելքում:



Այնուհետեւ բեմ հրաւիրեց Սպահանի քաղաքապետ դոկտ. Սահայեաննեժադը: Նա իր ուրախութիւնը յայտնելով խորհրդածողովին ներկայ գտնուելու առթիւ, նշեց, որ Սպահան քաղաքը Իրանի քաղաքակրթութեան օրրանն է եւ անուրանալի է Նոր Զուղայի հայութեան

դերը այս քաղաքակրթութեան ձեւաւորման գործում: Քաղաքապետն իր խօսքում անդրադարձաւ Զուղայի հայութեան ազդեցութեանը Իրանի մշակոյթի տեսանելի (մշակութային կոթողներ, եկեղեցիներ եւ այլն) եւ ոչ տեսանելի (հայ ժողովրդի աշխատասիրութիւն, նրանց սէրը դէպ հայկական մշակոյթ) բնագաւառներում, որպէս վառ օրինակ յիշատակելով Ս. Ամենափրկչեան վանքը: Նա նշեց, որ Իրանում, դարեր շարունակ, տարբեր մշակոյթների ու սովորութիւնների տէր միաստածեան կրօնների հետեւորդները, կողք-կողքի եւ փոխըմբռնման մթնոլորտում համագոյակցել եւ գործակցել են ի խնդիր Իրանի բարգաւաճման ու առաջընթացի. մի իրականութիւն, որը կարող է վառ օրինակ հանդիսանալ այլ երկրների համար: Յարգելի քաղաքապետը յիշեց Իրան-Իրաք պատերազմի ընթացքում հայ նահատակների քաջագործութիւնը, ընդգծեց Սպահան եւ Երեւան քոյր քաղաքների միջեւ առկայ կապերը եւ դրանց ընդլայնման հեռանկարը, իսկ իր խօսքի աւարտին նա յղա յայտնեց, որ համագոյակցութեան գործօնը խթանելու է Սպահանի մշակութային կեանքի եւ քաղաքակրթութեան առաւել զարգացմանը:

Շարունակութեան մէջ խօսք տրեց Միաստածեան կրօնների գրասենեակի տնօրէն դոկտ. Առզանիին, ով անդրադառնալով Սպահանի շքեղ ու փառաւոր անցեալին եւ պատմութեանը, կարելուրեց Նոր Զուղայի հայերի աչքառու դերակատարութիւնը՝ այս պատմութիւնը կերտելու եւ հարստացնելու գործում: Յարգելի տնօրէնն անելացնելով, որ Իսլամի շիաները պատմութեան բոլոր էջերում ընդարձակ համագործակցութիւն են ունեցել հայերի հետ, յայտնեց, որ այսօր եւս Իսլամական Իրանը հետեւելով շիա իսլամի գաղափարներին, անելի է խորացրել սոյն համագործակցութիւնը եւ կապը:

Դոկտ. Առզանին իր խօսքի աւարտին, Միաստածեան կրօնների գրասենեակի անունից յուշանւէր յանձնելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, իր ուրախութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետի ներկայութեան համար:

Վերոնշեալ արտայայտութիւններից յետոյ, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը

հրաւիրեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսին իր հայրապետական պատգամը փոխանցելու մասնակիցներին:



Արամ Ա Կաթողիկոսը ողջունեց բոլորի ներկայութիւնը, այնուհետեւ իր խօսքն ուղղելով Թեմիս թեմակալ առաջնորդին եւ ազգային մարմիններին՝ գնահատեց այս օգտաշատ նախաձեռնութիւնը, նշելով, որ այս համաժողովը առիթ է վերարժարծելու եւ վերարժետրելու Նոր Զուղայի կարեւոր դերակատարութեան հետ աղերս ունեցող երեսոյթներն ու արժէքները: Վեհափառ Հայրը գնահատելով խորհրդաժողովի համար ընտրուած բնաբանը՝ նշեց, որ Իրանի հանգուցեալ հոգեւոր առաջնորդ Իմամ Խոմէյնին, իր գլխաւորած հոգեւոր յեղափոխութեամբ եկաւ աշխարհին յիշեցնելու հոգեւոր եւ բարոյական արժէքների առանցքային կարեւորութիւնն ընկերային կեանքում, ինչպէս նաեւ միաստանեան կրօնների խաղաղ գոյակցութեան եւ գործակցութեան անհրաժեշտութիւնը: Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ այսօր Նոր Զուղան վկայում է, որ 400 տարիներ շարունակ, այս փոքր հողամասի վրայ, քրիստոնեաները եւ իսլամները ոչ միայն համագոյակցել են որպէս դրացիներ, այլ նաեւ գործակցել են: Նոր Զուղայի Ս.Ա. վանքը ոչ միայն խորհրդանիշն է համակեցութեան եւ համագոյակցութեան, ինչպէս ասուած է խորհրդաժողովի բնաբանում, այլեւ օրինակելի տիպար, մնայուն յուշարար: Արամ Ա Կաթողիկոսն իր խօսքն ավարտեց սույն արտայայտութեամբ. «*Ինչպէս անցեալում, այսօր եւս Իրանում ականատեսն ենք այդ գոյակցութեան եւ գործակցութեան: Այս համագումարը յիշեցնում է, որ խաղաղութեան, արդարութեան եւ համակեցութեան ճանապարհը երկխօսութիւնն է եւ երկխօսութիւնը դառնում է հարազատ ու ճշմարիտ, երբ իրագործում է փոխադարձ ճանաչման, յարգանքի եւ միմեանց ընդունելու հիմնական սկզբունքների հիման վրայ*»: Վեհափառ Հայրը յաջողութիւն մաղթելով ժողովին՝ ավարտեց իր խօսքը:



Խորհրդաժողովի յաջորդ բաժնում զեկույցներով հանդէս եկան Դաւիթ Գիրջինեանը «Ս.Ա. վանքը՝ հոգեւոր կենտրոն», Վարուժան Առաքելեանը՝ «Ս.Ա. վանքի ճարտարապետութիւնը», Անի Բաբայեանը՝ «Ս.Ա. վանքի որմնակարչութիւնը», Գէորգ Տէր Վարդանեանը՝ «Նոր Զուղայի գրչութեան արւեստը», Վազգէն Դուկասեա-

նը՝ «Ն. Զուղայի ընկերային, վարչական եւ եկեղեցական դրութիւնը 17-րդ դարում», Շոքուհոյսադաթ Առաքի Հաշեմին՝ «17-րդ դարի միջազգային անուտուրը եւ Նոր Զուղան», Արգամ Այազեանը՝ «Հին Զուղայի եւ Նախիջեանի հայկական յուշարձանների իրավիճակը», Յեւրի Աւետեանը՝ «Հայկական յուշարձանների պահպանման միջազգային ջանքերը», Ի.Ի.Հ.-ի դեսպանը Հայաստանում Մոհամմադ Ռէյսին՝ «Իրան-Հայաստան յարաբերութիւններում ըսպահանի դերը՝ որպէս Երեւանի քոյր քաղաք» եւ Ռոբերտ Բեգլարեանը՝ «Նոր Զուղայի հնարարութիւնները եւ ներուժը» թեմաները ներկայացնելով:

Փակման խօսքով հանդէս եկաւ Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, ով նշեց, թէ սույն խորհրդաժողովը պէտք է դիտել միաստանութեան կրօնների համագոյակցութեան լոյսի ներքոյ, քանի որ մեր պապերը չորս դար առաջ կերտել են մշակոյթ, հոգեմտաւոր արժէքներ, կոթողներ եւ մենք այդ բոլորով ապրել, շնչել ու ստեղծագործել ենք: Իր խօսքի շարունակութեան մէջ, Առաջնորդը յանուն ազգային մարմինների իր գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքն ուղղեց դասախօսներին, հրաւիրեալներին եւ այլ մասնակիցներին, ովքեր իրենց ներկայութեամբ առաւել փայլ հաղորդեցին խորհրդաժողովին: Սրբազան Հայրն իր գնահատանքի խօսքն ուղղեց Վեհափառ Հօր ընդունելութեան եւ «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակի գործադիր յանձնախմբերին եւ բոլոր նրանց, ովքեր մասնակից են դարձել այս միջոցառումները կազմակերպելու գործին: Թեմակալ առաջնորդը ներկաներին՝ որպէս ժառանգորդը Նոր Զուղայի անցեալի հարուստ պատմութիւնը կերտողների, յորդորեց շարունակել նրանց ընտրած ուղին, առաւել հարստացնել անցեալի մշակոյթն ու հոգեւոր արժէքները: Վերջում գերշ. Սրբազան Հայրը նշեց, որ այս յրբեւեանական խորհրդաժողովը խթանելու է Ի.Ի.Հ.-ում ապրող իսլամ-քրիստոնեայ կրօնների համակեցութեան ընդգծմանը եւ Իրան-Հայաստան մշակութային, կրօնական, տնտեսական եւ այլ ոլորտների յարաբերութիւնների առաւել ամրապնդմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ



Երեքշաբթի՝ 2014 թականի հոկտեմբերի 21-ի կէսօրին՝ ժամը 12:40-ին, Նոր Զուղայի հայոց ազգային կրթահամալիրի աշակերտության զւարճալի բացականչության ներքոյ կրթարան մուտք գործեց Հայաստանի հանրապետության վարչապետ պրն. Յովիկ Աբրահամեանը եւ նրան ընկերակցող Հայաստանի հանրապետության նախարարներից ու պետական բարձրաստիճան այրերից բաղկացած պատուիրակութիւնը, Իրանում Հ.Հ.-ի դեսպան պրն. Գրիգոր Առաքելեանը, Հ.Հ.-ում Իրանի դեսպան պրն. Մոհամմադ Ռէյսին, Սպահանի նահանգապետ պրն. Ռասուլ Զառգասփուրը եւ Հայաստանի հանրապետության ու Սպահանի պետական պաշտօնատար անձինք:

Յարգելի հիւրերին դպրոցի մուտքի մօտ դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի, Սպահանի կրթա-դաստիարակչական հիմնարկի եւ հայոց դպրոցի պատասխանատուները, ապա պատուիրակութիւնը մօտեցաւ դպրոցի բակում շարքեր կազմած աշակերտութեանը, ովքեր Իրանի իսլ. հանրապետության եւ Հայաստանի հանրապետության դրօշների ծածանումով եւ ուրախ կանչերով ողջունեցին հիւրերին:

Կրթական խորհրդի կողմից բարիգալստեան խօսք ընթերցեց պրն. Զանսոն Աղաբաբայեանը, Համալիրի պատմութեան համար փայլուն մի էջ համարելով Հ.Հ.-ի վարչապետ պրն. Յովիկ Աբրահամեանի եւ նախարարների ու բարձրաստիճան պատուիրակութեան ներկայութիւնը: Ապա հայոց դպրոցի տարբեր բաժանմունքների աշակերտներն անհատական եւ խմբական ասմունքներ, երգեր ու խօսքերի մի կոկիկ յայտագիր ձօնեցին վարչապետին եւ հիւրերին:



Գեղարեստական ծրագրից յետոյ արտայայտեց պրն. Յովիկ Աբրահամեանը, ով իր գնահատանքի խօսքն ուղղեց աշակերտութեանը եւ ուսուցիչներին: Պրն. վարչապետը յուրախութիւն բոլորի, յայտնեց, որ Հայաստանի հանրապետության պատկան մարմիններն իրենց ամբողջական զօրակցութիւնը կը բերեն Կրթահամալիրի բոլոր ձեռնարկների իրականացման ուղղութեամբ եւ ոչ մի ջանք չեն խնայելու կրթարանի վերելքի համար:

Հանդիպման ասարտին պրն. Վարչապետը մօտկից շփուեց եւ զրուցեց աշակերտութեան հետ:

ՄԵԾ ՀԱՆԴԻՄՈՒԹԵԱՄԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆԶԻ «Ս. ՅՈՎԱԷՓ ԱՐԵՄԱԹԱՅԻ», ԵԿԵՂԵՑՈՒ 350-ԱՄԵՆԱԿԻ ՅՈՐԲԵԼԵՆԱԿԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿԸ



Երեքշաբթի՝ հոկտեմբերի 21-ի երեկոյան, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, պատգամներով ու գեղարուեստական կատարումներով յագեցած յրբեկանական ձեռնարկով եզրափակեց Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովաէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակին նիւում միջոցառումների շարանը:

Ծրագրին ներկայ էին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը, Հ.Հ.-ի վարչապետ Յովիկ Աբրահամեանն ու նրան ընկերակցող պատիրակութիւնը՝ կազմած նախարարներից եւ պետական բարձրաստիճանի պաշտօնատարներից, իրանահայ երեք թեմերի առաջնորդները, Հայաստանում Իրանի իսլ. հանրապետութեան դեսպան պրն. Ռէյսին, Իրանում Հ.Հ.-ի դեսպան Գրիգոր Առաքելեանը եւ դեսպանատան պատասխանատուները, Իրանի իսլ. խորհրդարանում հրաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի եւ Թեհրանի հայոց թեմերի հոգեւորականաց դասի ու ազգային մարմինների ներկայացուցիչներ, շրջանի Հայ դատի յանձնախմբի եւ Թեհրանի «Ալիք» հաստատութեան ներկայացուցիչները, 350-ամեակի շրջագծում կայացած խորհրդածողովի դասախօսներն ու հրաւիրեալները եւ բազմահարիւր հանդիսատես:

Ձեռնարկն սկիզբ առաւ հանդիսավար Արթին Մուրադեանի խօսքով, որն իր բացման խօսքում ազգային կեանքի երկու հիմնասիւնները համարելով հայոց եկեղեցին եւ հայ դպրոցը, պատմական ակնարկ ունեցաւ Նոր Զուղայի 400 տարիների պատմութեան կարեւոր դրագներին՝ թարկելով կարեւոր ձեռքբերումներն ու ստեղծագործութիւնները:

Այնուհետեւ յանուն Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի արտայայտեց ատենապետ Նոէլ Մինասեանը, ով իր խօսքի սկզբնական բաժնում առանձնաբար ողջունց հոգեւոր եւ աշխարհական բարձրաստիճանի հիւրերին, որին արձագանքեց ներկայ ժողովուրդն՝ իր բուն ծափողջոյններով: Նա իր խօսքի շա-

րունակութեան մէջ անդրադառնալով Ս. Յովաէփ Արեմաթացի եկեղեցու 350-ամեակի նշման շրջագծում իրականացած միջոցառումներին՝ ի մասնաւորի Սփիւքի նախարարութեան կողմից 2014-ի մայիսին, Հայաստանում կազմակերպած «Զուղայի օրեր» անան ներքոյ ձեռնարկներին, շնորհակալական խօսք ուղղեց Իրանում Հ.Հ. դեսպան Գրիգոր Առաքելեանին եւ Հայաստանում Իրանի իսլ. հանրապետութեան դեսպան պրն. Ռէյսին՝ միջոցառումների կազմակերպման հարցում Թեմիս օժանդակելու համար:



Պրն. Մինասեանն իր խօսքի մի այլ բաժնում շեշտելով Իրան-Հաստան երկու երկրների ժողովուրդների միջեւ եղած բարեկամական անքակտելի յարաբերութիւնները՝ ատելացրեց. «*Իրանի ու Հայաստանի ժողովուրդների բարեկամութիւնը զարբերի խորք եւ արմատ ունի: Արցախեան պատերազմի այդ նեղ օրերին իրանը տարածաշրջանի միակ երկիրն էր, որն օգնութեան ձեռք մեկնեց Հայ ժողովրդին եւ դա արդիւնքն*



Ընթացքում խմբավար եւ դաշնակահար Համիկ Ալեքսանդրեանը դաշնամուրով նագեց իր հեղինակած «Նոր Զուղա» եւ «Շառաչին ալիքներ» երաժշտությունները: Իսկ գեղարեստական ծրագրի երկրորդ բաժնում հայ երգերի կատարումներով հանդէս եկաւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ խմբավար Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:

Հարկ է նշել, որ «Կոմիտաս» համույթի գեղարեստական ղեկավարն էր Ռիմա Սիմոնեանը, իսկ պարուսույցը՝ Յակոբ Մարգարեանը:



Գեղարեստական ելույթների աւարտին ներկայացրին իր հայրական պատգամը փոխանցեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը:



Գերշ. Սրբազան Հայրը ողջունելով բարձրաստի-

ճան հոգեւորական եւ աշխարհական հիւրերի, դասախօսների, ազգայինների եւ հոծ թույլ ժողովրդի ներկայութիւնը, շեշտեց, որ առանց ժողովրդի ոչ հայրենիք, ոչ մշակոյթ եւ ոչ էլ գիր ու գրականութիւն կարող է լինել: Նա իր խօսքի շարունակութեան մէջ կարեւորութեամբ նշելով, թէ հայ ժողովուրդը երբեք չի մեռնի, քանի դեռ նման Հայաստանեայց առաքելական եկեղեցի, հայրենիք, պետականութիւն, հոգեւոր առաջնորդներ, պետական այրեր, մշակոյթ ու երիտասարդութիւն ունի, աւելացրեց, որ «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակի տօնը մեզ պատգամում է՝ ամուր մնալ մեր հաւատքում եւ Աստծու ներկայութիւնն զգալ մնալուն կերպով:



Այնուհետեւ որպէս եզրափակիչ խօսք, գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը հրաւիրեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսին՝ իր հայրապետական պատգամը փոխանցելու:

Վեհափառ Հայրապետն իր խօսքում շեշտելով, որ ազգերն ապրում եւ յաւերժանում են իրենց սրբազան արժէքներով, մեր ազգի սրբազան արժէքներից թարկեց՝ եկեղեցին, մշակոյթը, հայրենիքն ու պետականութիւնը եւ աւելացրեց. «Մեր ժողովրդի համար սրբազան արժէք է նաեւ մեր ազգային պահանջատիրութիւնը: Մենք պահանջատէր ժողովուրդ ենք եւ ցեղասպանն իրաւունք չունի մեր ժողովրդի իրաւունքները բռնաբարւած պահելու: Բնականաբար Հայաստանը որպէս պետութիւն, տարբեր ոճ, տարբեր լեզու եւ տարբեր մօտեցում ունի պահանջատիրութեան հարցում, իսկ Սփիւռքը որպէս Սփիւռք, տարբեր ոճ, տարբեր լեզու եւ տարբեր մօտեցում ունի, սակայն Հայաստանի եւ Սփիւռքի նպատակը նոյնն է ու մենք պահանջատէր ենք»:

Վեհափառ Հայրապետն իր խօսքի աւարտին աւելացրեց, որ այսօր Նոր Զուղան իր չորս դարեայ պատմութեան խորքից մեզ բոլորիս պատգամում է՝ ժողովուրդ հայոց հաւատարիմ մնալ քո սրբազան արժէքներին՝ եկեղեցուն, հայրենիքին, մշակոյթին ու պահանջատիրութեանը եւ քո հաւատարմութեամբ ապրիր, հզօրացիր եւ յաւերժացիր:

Տեղի է ունենում 350-ամյա Մայր Սրբաշինության հիմնադրման 350-ամյակի կոմպլեքսիվ և համապարփակ հանրամատչելի միջոցառումների շարքի շրջանակներում (Եւրոպայի և Արևելքի միջև)



եկաւ նաեւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, ով շեշտելով Աստծու կողմից մարդ արարածի ազատ ստեղծմանը, անելացրեց, որ ազատութիւնը մարդու իրաւունքն ու արժանապատուութիւնն է եւ ոչ ոք իրաւունք չունի այն խլելու նրանից:



Սրբազան Հայրն իր խօսքի մի այլ բաժնում ցաւով անդրադառնալով հայ ժողովրդի դարաւոր թշնամի Թուրքիայի պետութեան եւ նրա միջոցով հովանաւորող «Դ.Ա.Է.Ը.» ահաբեկչական խմբաւորման կողմից Դեր Զորի Սրբոց Նահատակաց յուշահամալիրի պատմական եկեղեցու պայթեցմանը, կարեւորութեամբ շեշտեց, որ թշնամին այդ արարքներով չի կարող սպանել մեր ոգին, մեր հաւատքը եւ մեր ժողովրդի դատի ու պայքարի գիտակցութիւնը:

Թեմակալ առաջնորդն իր խօսքի մի այլ բաժնում կարեւորելով Սփիւք-Հայաստան 5-րդ համաժողովում Ն.Ա.Օ.Տ. Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կատարած յայտարարութիւնը՝ առաջիկայում Անթիլիասի միջոցով Թուրքիայի Սահմանադրական դատարանում, Սիսի կաթողիկոսարանը հայ եկեղեցուն ու հայ ժողովրդին վերադարձնելու ուղղութեամբ դատ բացելու մասին, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը մի նոր առիթ համարեց հաւատքն ամրապնդելու եւ մեր ճայնը միջազգային հարթակների վրայ առաւել լսելի դարձնել:

լու համար:

Գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանն իր արտայայտութիւններն եզրափակեց շնորհաւորանքի խօսք ուղղելով Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանին՝ սեպտեմբեր 21-ի առիթով Հ.Հ.-ի նախագահ Սերժ Սարգսեանի կողմից «Մովսէս Խորենացի» շքանշանով պարգեւատրելու կապակցութեամբ:



Ժողովրդական տօնակատարութիւնը յագեցած էր նաեւ աշխույժ երգերի կատարմամբ, որտեղ հայկական երգերի անզուգական մատուցմամբ հանդիսատեսի տօնական տրամադրութիւնն առաւել բարձրացրեց Հայաստանից ժամանած երգիչ Դաւիթ Սասունցին (Դաւիթ Թուշարեան):



**ԾՁ Մ, ԱԵ à à 0 è à Ձ ԾՁ ՄԱ օ ò ԱԵ ԾՁ ՄԱ Ի օ Սի ծ à Մ Ձ Ի Ձ Մ օ ò Ծ Ձ Ծ Ձ օ Ձ Մ ԱԵ
Բ ձ ա Ձ Մ Ա ՚ Ձ Մ Ձ Ի Ա Ա Մ, Ծ Ձ Մ à ò Ծ Ծ Ձ Ծ Ձ Մ Ձ ի Ձ Ծ Ա Ծ օ Ի**

Հինգշաբթի՝ 2014 թականի հոկտեմբերի 2-ին, «Սրբազան պաշտպանության շաբաթալս» առթիւ, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի գլխավորութեամբ, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչներից եւ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում նահատակած հայ զինուորների ընտանիքների անդամներից բաղկացած պատուիրակութիւնը, Սպահանի թեմանօթային զօրանոցի հրամանատարութեան գրասենեակում հանդիպում ունեցաւ Սպահան, Եազը եւ Չհարմահալ նահանգների բանակի ընդհանուր հրամանատար Ռեզա Ջահադիի եւ զինուորական բարձրաստիճան հրամանատարների հետ:

ու բանակի ղեկավարութեան խոհուն ու շրջահայեացքաղաքականութեան շնորհիւ, հակառակ տարածաշրջանում տիրող պատերազմական եւ անբարենպաստ պայմանների, Իրանի իսլամական հանարպետութիւնը մնում է խաղաղ ու կայուն վիճակի մէջ:



Հանդիպման ընթացքում երկուստեք շնորհաւորանքներ փոխանցեցին «Սրբազան պաշտպանության շաբաթալս» առթիւ:

Թեմակալ առաջնորդը դատապարտեց անմարդկային բոլոր այն արարքները, որոնք իրագործուած են Միջին արեւելքում՝ ահաբեկչական խմբերի միջոցով: Նա դրանք միաստուածեան կրօնների սկզբունքներին դէմ յայտարարելով՝ անընդունելի համարեց կրօնի անամբ կատարող որեւէ հակամարդկային եւ խտրականութիւն ու ռիսակալութիւն սերմանող բռնութիւն ու գործողութիւն: Գերշ. Սրբազան Հայրը յիշեցրեց, որ հայ ազգն իբրեւ նահատակութեան ճանապարհն անցած ժողովուրդ, լաւապէս ծանօթ է դրա հոգեբանութեանն ու ծանրութեանը: Նա աւելացրեց, որ շուտով տեղի են ունենալու Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման ծրագրերը, որոնք լաւագոյն առիթն են դատապարտելու եւ նման ոճրագործութիւնների շարունակութեան արգելքը հանդիսանալու ուղղութեամբ ծրագրեր իրականացնելու:



Բանակի հրամանատար՝ Ռեզա Ջահադին, շնորհակալութիւն եւ ուրախութիւն յայտնելով պատուիրակութեան եւ յատկապէս նահատակների ընտանիքների անդամների այցի կապակցութեամբ, հպարտութեամբ յիշեց հայութեան զոհողութիւններն ու սիրագործութիւնները՝ երկրի ամբողջականութեան, գերիշխանութեան եւ հզօրութեան պահպանման գործում, որի համար յատուկ շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց նահատակների հարազատներին:



Այնուհետեւ նահատակների հարազատները ներկայացնելով իրենց, մանրամասնութիւններ փոխանցեցին իրենց հարազատների նահատակութեան վայրի, թականի եւ այլնի վերաբերեալ: Հրամանատարը կարգադրեց, իբրեւ երախտիքի նշան, բանակի կողմից պարգեատրել նահատակների ընտանիքներին:
Հիւրասիրելուց յետոյ, ծաղկեփնջերի եւ յուշանւերների փոխանակումով աւարտեց հանդիպումը:

ԼԱՉԱՐԵԱՆԻ ՈՒՍԱԳԻՏՈՒՄԸ ԵՎ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ ՈՒՄ



Իսլամական մշակույթի եւ հաղորդակցութեան կազմակերպութեան հրաւերով Իրան ժամանած Լազարեանի անան իրաւագիտութեան եւ միջազգային յարաբերութիւնների ինստիտուտի դասախօսներից եւ ուսանողներից բաղկացած պատւիրակութիւնը, չորեքշաբթի՝ 8 հոկտեմբերի առաւօտեան այցելեց Ս. Ամենափրկչեան վանք:

Խումբն նախ այցելեց Ս.Ա. Վանքի եկեղեցի եւ թանգարան, այնուհետեւ Ծաղկեայ դահլիճում հիւրընկալեց Թեմիս թեմակալ առաջնորդ. գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի, Թեմական խորհրդի անդամներ՝ Նոէլ Մինասեանի ու Քատոլին Դիլանչեանի եւ Երիտասարդական խորհրդի կողմից:

Ողջույնի եւ բարիգալստեան արտայայտութիւններից յետոյ, Սրբազան Հայրն իր խօսքն ուղղելով Հայաստանից ժամանած ուսանողներին, կարեւորելով նրանց առաքելութիւնը որպէս գիտակից եւ կրթւած խաւի ներկայացուցիչներ, նրանցից ակնկալեց հայ ժողովրդի իրաւունքների ներկայացման դեսպանն ու թարգմանը հանդիսանալ միջազգային ասպարէզներում:

Լազարեան ինստիտուտի միջազգային յարաբերութիւնների տնօրէն՝ Անահիտ Ռուստամեանն իր ուրախութիւնը յայտնեց Նոր Զուղայում գտնուելու կապակցութեամբ եւ գնահատանքով արտայայտեց հայապահպանութեան ուղղութեամբ Իրանում տարող աշխատանքների վերաբերեալ: Նա դիմելով Իրանի հայ ուսանողներին, նրանց յորդորեց իրենց գիտական յօլաժներն եւ հետազօտութիւնները տրամադրել՝ Հայաստանի գիտական թերթերում հրատարակելու համար:



Այնուհետեւ արտայայտեց Լազարեան ինստիտուտի միջազգային յարաբերութիւնների ամբիոնի վարիչ՝ Գուրգէն Վարդանեանը, ով տեղեկացնելով, որ Իրանի տարբեր համալսարաններից բազմաթիւ առաջարկներ են ստացել Իրանի եւ Հայաստանի միջեւ ուսանողների փոխանակման առնչութեամբ, յոյս յայտնեց, որ այն հիմք է հանդիսանալու երկու հարեան երկրների միջեւ արդէն իսկ զգալի աճ արձանագրած կրթական շփումների համար:

Հանդիպման շարունակութեան մէջ արտայայտեց Թեմական Խորհրդի առեմնապետ՝ Նոէլ Մինասեանը, ով ողջունելով պատւիրակութեան ներկայութիւնը Նոր Զուղայում, հանգամանօրէն տեղեկութիւններ փոխանցեց Թեմի երիտասարդութեան համար առաւել նպաստաւոր պայմաններ ստեղծելու նպատակով ազգային իշխանութեան կողմից տարող աշխատանքների շուրջ: Ապա ծանօթացման գծով ներկայացրեց Նոր Զուղայում գործող երիտասարդական կառույցները:

Խօսք առնելով Թեմի Երիտասարդական խորհրդի ներկայացուցիչ՝ Նիկելիա Աբրահամեանը, ընդհանուր գծերով տեղեկութիւններ փոխանցեց Խորհրդի գործունէութեան վերաբերեալ եւ մատնանշեց երիտասարդութեան համար թեմում առկա հնարաւորութիւններն ու դժարութիւնները:

Հանդիպման աւարտին, պատւիրակութեան անդամներն իրենց մտածումները կիսեցին իրանահայ համայնքի մասին եւ բարձր տպաւորութեամբ թողեցին Ս.Ա. վանքը:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ «ՍՐԲՈՑ ԹԱՐԳԱՄԱՆՁԱՑ» ՏՕՆԻՆ

Շաբաթ՝ հոկտեմբերի 11-ի առաւօտեան, «Սրբոց Թարգմանչաց վարդապետաց» տօնի օրը, Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց, որին հաղորդակից դարձան ազգային մարմինների Երկայացուցիչները, համայնքի անդամները եւ հայոց ազգային դպրոցների աշակերտ-ուհիները՝ տեսչութիւնների, ուսուցչական կազմերի եւ Ծնողական խորհուրդների առաջնորդութեամբ: Պատարագիչ քահանայ հայրն էր արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբալեանը, իսկ երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախմբի ծիսակատար խումբը:

Ների շարան եւ աւանդոյթի համաձայն այն սկիզբ առաւ Նոր Զուղայի հայոց ազգային նախակրթարանի սաների միջոցով, ովքեր հանդէս եկան առիթին ներառւած արտասանութեան եւ «Հայերէն երգեր» երգի խմբական կատարումներով:



Յաջորդիւ հայոց ազգային «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի աշակերտներ՝ Վահագն Թահմազեանը, Նարինէ Խուդաբախշեանը, Փարելի Ղազարեանը, Նոյեմի Ղարիբեանը, Շիրակ Դիլանշեանը եւ Լիլիթ Գէորգեանը հատուած առ հատուած առանձնաբար ասմունքեցին Համէթ Կարճիկեանի հեղինակութեամբ «Հայոց լեզու» բանաստեղծութիւնը, որից յետոյ առիթին ներառւած երգով հանդէս եկաւ Դիւն Յովհաննիսեանը:

Արարողութիւնից յետոյ Երկայները հաւաքեցին Ս. Ամենափրկչեան վանքի «Խաչատուր Կեսարացի»-ի անուան թանգարանի մուտքի մօտ, որտեղ իրականացւեց աշակերտական գեղարեստական ծրագիր՝ հաղորդավարութեամբ ուսուցչուհի Սօսէ Պողոսեանի, ով օրւան պատշաճ իր խօսքում այսպէս անդրադարձաւ. «Մեզ այսօր այստեղ է կոչել մի սրբազան աւանդութիւն, որը ե՛լ ազգային ե՛լ համայնքային ընկալումներով կրում է եզակի նշանակութիւն եւ խորհուրդ: Ազգային ինքնագիտակցումի խորհուրդը մեզ կոչ է անում հարազատ ժողովրդի մշակոյթի-պատմութեան առանցքում վերագտնելու ազգային հոգեւոր գոյի անաղարտ հիւլէն եւ վերահաստատելու դրա շառաւիղը մեզանից իւրաքանչիւրի հոգում»:



Ապա յանուն «Քանանեան» աղջ. ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի ասմունքեցին Արիա Մարգարեանը՝ Վոսմ Յովսէփեանի գրչին պատկանող «Հայոց Լեզու»-ն, իսկ Վանէ Յարութիւնեանը՝ Վարանդի «Նմեսիս»-ից մի հատուած:



Այնուհետեւ իրականացւեց աշակերտական ելոյթ-

«Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի անունից նախ աշակերտութեան միջոցով ցուցադրուեց իրենց ձեռքի աշխատանքը, որտեղ «Ոսկեդար» բառի իւրաքանչիւր տառ պատարասուել էր գեղեցիկ նախշերով՝ այն նւիրելով հայ ժողովրդի ոսկեդարն արարած առաջնորդ ուսուցիչներին: Ապա ասմունքեցին Արամէ Մովսիսեանը եւ Վանանդ Իսաղուլեանը՝ Սարմէնի ստեղծագործութիւններից «Բարբառ մայրենի»-ն:



Վերջում ներկաներին իր հայրական օրհնանքը տեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, ով շնորհատրելով Թարգամանչած եւ հայ ուսուցչի տօների կապակցութեամբ, հայ դպրոցի, ուսուցչի եւ աշակերտի գոյութիւնը հայ ժողովրդի գոյատեման երաշխիքը համարեց եւ ասաց. *«Թարգամանչաց տօնը մեզ պատգամում է, որ ամուր մնանք քրիստոնէական ճշմարիտ հաւատքի մէջ՝ այն դրսեւորելով մեր ամենօրեայ կեանքում եւ անաղարտ ու մաքուր*

պահենք մայրենի լեզուն, որովհետեւ այդ զէնքով զինւած կը կարողանանք ազգի արժէքները, սրբութիւններն ու գանձերը պահպանել եւ հայ ժողովրդի արդար իրաւունքների տէրն ու պաշտպանը լինել: Մենք պիտի կառչած մնանք մեր արմատներին, հայրենիքին ու արժանապատուութեանը: Պէտք է մեր մշակոյթը պահենք ամուր եւ օրըստօրէ աւելի հարստացնենք մեր մշակոյթով՝ մեր ինքնութիւնը եւ դիմագիծը պա հելու համար»:



Ծրագրի աւարտին «Քանանեան» դպրոցի աշակերտուհիները եւ ուսուցչուհիները համախմբուեցին Ս.Ա. վանքի բակում գտնուող դպրոցի հիմնադիր՝ Վարվառէ Քանանեանի շիրմաքարի շուրջ՝ իրենց յարգանքի տուրքը մատուցելու բարերարի անթառամ յիշատակին: Ընթացքում հանգուցեալի կենսագրականին անդրադարձաւ նաեւ աշակերտուհի Թանիա Մինասեանը:



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՉԱՆԳԻ ՂՈՂԱՆՁՈՎ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻԱՅ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐԻԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՉԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Երեքշաբթի՝ սեպտեմբերի 23-ի առաւօտեան ժամը 8-ին, Նոր Զուղայի Հայոց ազգային կրթահամալիրի բակում, որտեղ համախմբուել էին «Արմէն» տարրական երկսեռ կրթահամալիրի եւ «Քանանեան» աղջ. ու «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների տեսչութիւնները, ուսուցչական կազմերը, Ծնողական խորհուրդները, ծնողները եւ աշակերտաշակերտուհիները, դպրոցական տարեմուտի առաջին զանգով սկիզբ առաւ 2014-2015 ուսումնական տարին: Հանդիսաւոր արարողութեանը ներկայ էին նաեւ արժն. Տ. Մեսրոպ աւ. քինջ. Գալստեանեանն եւ Սպահանի հայոց թեմի Թեմական ու Կրթական խորհուրդների ներկայացուցիչները:



Ծրագրի սկզբում ողջոյնի խօսքով եւ տարեմուտի կապակցութեամբ շնորհատրանքներով ելոյթ ունեցաւ «Արմէն» կրթահամալիրի տեսուչ Վրէժ Ծիրանեանը, ով յլոյս յայտնեց սոյն տարեշրջանը յաջողութիւններով լեցուն տարի լինի բոլորի համար:

Այնուհետեւ ելոյթների շարանում իր խօսքն ունեցաւ «Քանանեան» դպրոցի տեսուչ տկն. Սալաոիֆաւրը, որն իր հերթին շնորհատրելով առիթի կապակցութեամբ, աշակերտներին կոչ արեց օգտագործելով Կրթահամալիրի բոլոր հնարաւորութիւնները, ջանք չխնայել զարգանալու եւ յաջողութիւններ արձանա-

գրելու ուղղությամբ: Նա աշակերտներին պատգամեց՝ լաւ ու օգտակար մարդ լինել եւ իրենց սերտած իւրաքանչիւր գիտելիքն օգտագործել մարդկութեանը ծառայելու ճանապարհին:



Տեսչուհու արտայայտութիւններից յետոյ պրն. Ծիրանեանը շնորհակալութիւն յայտնելով «Վատարիներն» դպրոցի նախորդ տեսուչ պրն. Ադիբիին, ով այս տարի հանգստի է կոչել, հրաւիրեց նոյն դպրոցի նորանշանակ տեսուչ պրն. Մոհսենփուտին իր պատգամը փոխանցելու: Պրն. Մոհսենփուտը յաջողութիւն մաղթելով բոլորին ուսման ասպարէզում՝ գնահատանքի խօսք ուղղեց նախորդ տեսուչին՝ ընթացիկ տարեշրջանից «Վատարիներն» դպրոցում նախահամալսարանական դասարանների բացման ուղղությամբ:



Ծրագրի շարունակութեան մէջ Կրթական խորհրդի անունից արտայայտեց նոյն խորհրդի փոխ-ատենապետ Արթին Քեչիշեանը, որն իր խօսքում ուսումնական տարւայ սկզբնական օրերը կարեւորելով աշակերտների մօտ դրական հայեացք առաջացնելու եւ նրանց առաւել աշխատասիրութեան մղելու համար, համապատասխան ուսումնական համակարգը հասարակութեան զարգացման գործօններից համարեց: Նա կարեւորութեամբ անդրադարձաւ նաեւ հայոց ազգային դպրոցների կրթական համակարգի արդիւնաւետութեանը եւ կոչ արեց առաւել ուշադրութիւն դարձնել աշակերտների ինքնավստահութեան եւ անկախութեան զարգացմանը, հոգեկան աշխարհին եւ զգացմունքներին, զարգացնել ուսման ասպարէզում ծնող-

ների փոխ-համագործակցութիւնը եւ առաւել սերտացնել աշակերտ-ուսուցիչ յարաբերութիւնը:



Ապա ընթերցեց Իրանի կրթութեան նախարարի պատգամը դպրոցների վերմուտի առթիւ՝ «Վատարիներն» դպրոցի փոխ-տեսուչ Ռուբէն Գրիգորեանի միջոցով, որից յետոյ ծրագիրը եզրափակեց արժն. Տ. Մ'ետրոպ աւ քհնյ. Գալստանեանի օրհնանքով: Նա դպրոցը մարդակերտման կենտրոն համարեց, որտեղ կրթում եւ դաստիարակում են ապագայ սերունդները եւ կարեւորութեամբ նշեց, որ հայոց ազգային դպրոցի իւրաքանչիւր աշակերտի յաջողութեան գրաւականն է ոչ միայն իր, այլեւ Կրթական խորհրդի, տեսչութեան, ուսուցիչների, դպրոցի անձնակազմի եւ ծնողների տքնաջան աշխատանքը: Նա աշակերտներին յորդորելով բժախնդրութեամբ կատարել իրենց պարտականութիւնները, սիրել միմեանց եւ լինել աշխատունակ ու ժիր, վերջում փոխանցեց նաեւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի ջերմագին ողջոյնները՝ դպրոցական տարեմուտի կապակցութեամբ:



Ծրագրի աւարտին, Տէրունական աղօթքի խմբական կատարումից յետոյ ուսումնական տարեշրջանի առաջին զանգը հնչեց Քահանայ Հօր ձեռամբ եւ նոր եռանդով ու խանդավառութեամբ տոգորած աշակերտներն եւ ուսուցիչները շտապեցին դէպի դասարաններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿՆԸ ՏՎՐԻՄՅ ՎՈՎՅԻՆ ՉՄԼԳԸ ՇՆՉԵՅ ՆՈՐ ԶՈՒՂՅՅԻ ՇՅՅՈՅ ՎՁԳՎՅԻՆ ՄԼԿՎՊՐՏԷԶ-ՆՎԽՎԿՐԲՎՐՄՈՒՄ

Շաբաթ՝ սեպտեմբերի 27-ի առաւօտեան ժամը 8:30-ին, Նոր Զուղայի Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանն իր գիրկն ընդունեց խանդավառ սաներին, ովքեր իրենց ծնողների եւ հարազատների ընկերակցութեամբ էին ներկայացել դպրոց: Քիչ անց, առաւօտեան ժամը 9:00-ին, մանկական ուրախ ճիշերով ողողած դպրոց յաճախեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ընկերակցութեամբ Կրթական խորհրդի անդամներ Մեղեդի Խուդաբախչեանի եւ Զանսոն Աղաբաբայեանի:



Սրբազան Հօր ներկայ գտնւելուն պէս մանկապարտէզի երեք խմբակների ու նախակրթարանի երկու դասարանների աշակերտներն իրենց դաստիարակների եւ ուսուցիչների ուղեկցութեամբ թողեցին խաղահրապարակը եւ առանձին շարքերով համախմբւեցին բակում, որտեղ դպրոցի տեսչուհի Քառուլին Դիլանչեանը շնորհաւորելով դպրոցական տարեմուտի կապակցութեամբ՝ իր խօսքը շարունակեց համուզում յայտնելով, որ դպրոցի ուսուցիչների ու պատասխանատուների եւ ծնողների միասնական աշխատանքի շնորհիւ երեխաները կը դառնան վաղաջ գիտնականներն ու մտաւորականները: Տեսչուհին իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնեց ազգային մարմիններին՝ աշխատանքներում դպրոցը հովանաւորելու համար:



Տկն. Դիլանչեանի խօսքից յետոյ տարեշրջանի առաջին միասնական «Տէրունական» աղօթքը հնչեց մանուկների եւ միւս բոլոր ներկաների շուրթերից:

Այնուհետեւ իր հայրական օրհնանքը փոխանցեց գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը: Սկզբում Սրբազան Հօր հարցերին գեղեցիկ «Այո»-ներով պատասխանեցին թօթովախօս սաները, որով հաստատեցին իրենց անսահման սէրը դպրոցի ու դպրոցական աշխատանքների նկատմամբ: Ապա թեմակալ առջնորդն աշակերտներին մաղթելով կանաչ ճանապարհ ցանկացաւ նրանք Աստծու շնորքով մեծանան, որպէսզի ապագայում կարողանան մեր ժողովրդի հպարտութիւնը դառնալ: Սրբազան Հայրն իր խօսքի շարունակութեան մէջ մանուկներին յորդորեց լսել ուսուցիչներին եւ լաւ սովորել հայերէնը, իսկ ծնողներին պատգամեց, որ հայ դպրոցում երեխաները զօրանալու են հայրենի կրթութեամբ եւ վաղը տեսնելու ենք մեր զաւակների քայլերը դէպի բարին, գեղեցիկը եւ ճշմարիտը:



Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն իր հայրական սիրով խօսքերն արտայայտելուց յետոյ հնչեցրեց տարեմուտի առաջին զանգը, որից յետոյ փոքրիկներն իրենց ուսուցիչների ընկերակցութեամբ անցան դպրոցի սրահ, ուր նախաճաշեցին եւ երգեցին մանկական երգեր, փորձելով առաւել ճանաչել միմեանց եւ յատկապէս այն գեղեցիկ ու նոր աշխարհը, որն ապագայ ամիսների ընթացքում հանդիսանալով իրենց երկրորդ տունը, հոգեհարազատ եւ անփոխարինելի միջավայր է լինելու նրանցից իւրաքանչիւրի համար:

Այնուհետեւ մանուկներն առիթ ունեցան դարձեալ խաղահրապարակում խաղալ եւ իրենց ծնողների ընկերակցութեամբ ծանօթանալ դպրոցի տարբեր բաժիններին: Այսպիսով աւարտեց Նոր Զուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանում 2014-2015 ուսումնական տարւայ առաջին օրը եւ երեխաները մեծ խանդավառութեամբ թողեցին դպրոցը:

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԳՐԻՉՆԵՐԻ ՈՒ ԾԱՂԿՈՂՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ՅԵՏՆՈՐԴՆԵՐԻ՝
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ «ՎԱՏԱՐԻՆԵԱՆ» ՏՂԱՅՈՉ ԴԳՐՈՉԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ
ԱՇԽԱՏԱՆՈՉ

§¼øàÕê, Æ øàÕàð ø°¼ Ø²î àðð² Û°Øø¡



Հոկտեմբերի 2-ին և 3-ին, Նոր Զուղայի հայոց ազգային «Կատարինեան» տղայոց ուղեցույց և միջնակարգ դպրոցում, նախաձեռնությամբ դպրոցի հայերեն առարկաների դասատու և մշակութային աշխատանքների պատասխանատու Սուէ Պողոսեանի և համագործակցությամբ գեղանկարչության ոլորտում մասնագետներ՝ Ադրինէ Ստեփանեանի և Անեթ Քեչիշեանի ու հայերեն առարկաների ուսուցչուհի Արմինէ Սիմոնեանի, տեղի ունեցավ երկօրեայ աշխատանոց՝ «Սրբոց Թարգմանչաց» տօնին ընդառաջ, որին իրենց աշխույժ մասնակցությունն էին բերել դպրոցի աշակերտները:



Աշխատանքի սկզբում ուսուցչուհի Սուէ Պողոսեանը բացատրեց սույն նախաձեռնության նպատակը, նշելով, որ այն աշակերտութանը ծանոթացնելու է 5-րդ դարից՝ «Ոսկեդար»-ից սկիզբ առած հայ մշակույթին: Այնուհետև նա համառոտ ակնարկ ունեցավ հայ մշակույթի ապրած զարթոնքին և պատմությանը, յատկապես մանրանկարչության ճիւղերից՝ զարդատառերին, որը առնչում էր նաև կատարելիք աշխատանքին: Ուսուցչուհին բացատրելով երկօրեայ ծրագրի

ընթացքը՝ անվացրեց, որ արդիւնքում պատրաստւած 7 զարդատառերը, որը կազմում են «Ոսկեդար» բառը, ընտրւել են սփիւռքահայ (կանադահայ) լուսանկարիչ՝ Հրայր Խաչերեանի (Բագէ) հաւաքածոյից՝ նկարած Ս. Ամենափրկչեան վանքում և այլուր գտնուող ձեռագիր մատենաներից:



Ապա Ադրինէ Ստեփանեանն առաւել մանրամասն բացատրությամբ աշակերտներին ծանոթացրեց աշխատանքին, որից յետոյ նրանք խմբերի բաժանւելով, մտերմիկ ու հաճելի մթնոլորտում և ուշադրությամբ ներկեցին զարդատառերը՝ ուսուցիչների վերահսկողութեան ներքոյ:

Ծրագրի երկրորդ օրը, ներկայացւանաւ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի փոխ-ատենապետ Արթին Քեչիշեանը, ով մօտկից ականատեսը լինելով աշակերտների ջանադիր աշխատանքին, գնահատանքի խօսք ուղղեց «Կատարինեան» դպրոցի տղաներին՝ իրենց աշխույժ մասնակցութեան համար, յատկապես նշելով, որ նման ընդառաջում և խանդավառութիւն առաջացել է դպրոցի պատասխանատուների, ուսուցիչների և Ծնողական խորհրդի անխոնջ գործունէութեան շնորհիւ:

Երկօրեայ սույն աշխատանքին իր օժանդակութիւնը ցուցաբերեց նաև դպրոցի Ծնողական խորհուրդը՝ դարձնելով ընթացքում հիւրասիրելով բոլորին:

ԿԱՐԻՆԷ ՄԻՆԱՍԵԱՆԻ ԶՆՈՒՄԻՆԱՏԻ ԾՈՒՑԱՀԱՄԱԼԵՐԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄՐԱՀՈՒՄ

Հոկտեմբերեան մշակութային օրերը պատեմ առիթ համարելով, Նոր Զուղայի հայոց ազգային «Քանանեան» աղջուղեցոց եւ միջնակարգ դպրոցի պատասխանատուները կազմակերպեցին նոյն դպրոցի տարիների ուսուցչուհի եւ այժմ փոխ-տնօրէն Կարինէ Մինասեանի ձեռագործների ցուցահանդէսը՝ նպատակ ունենալով տեխնիկական զարգացած աշխարհում ապրող երիտասարդին առաւել ծանօթացնելու հայ ձեռարեստիին:



Ցուցահանդէսի պաշտօնական բացման ընթացքում արտայայտեց դպրոցի գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը, ով անդրադառնալով հեղինակի մարդկային յատկանշներին՝ որպէս աշխատատէր ուսուցիչ, մասնագէտ ու համեստ հայուհի, յաջողութիւն մատթեց նրան եւ ասաց. *«Թէեւ մեքենայացած կեանքի շրջում է յայտնել արւեստը, սակայն Նոր Զուղայեցի կիներ միշտ փայլել է իր ձեռարւեստով ու ճաշակով եւ տկն. Կարինէի նմանների շնորհիւ հայ արւեստը նոր երանգ ու կենդանութիւն է ստանում»:*



Այնուհետեւ արտայայտեց նաեւ դպրոցի տեսչուհին տկն. Սալառիֆաթը, ով իր խօսքում գնահատելով հայի, ի մասնաւոր հայ կնոջ արւեստը, կարեւորեց նոր սերնդի մօտ բազմակողմանի զարգանալը, թէ կրթութեան եւ թէ արւեստի բնագաւառներում: Նա վերջում գնահատանքի խօսք ուղղեց նաեւ հայ մայրերին՝ նման բազմաշնորհ զաւակներ դաստիարակելու համար:

Ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ հինգշաբթի՝ հոկտեմբերի 2-ի առաւօտեան՝ ներկայութեամբ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի, Նոր Զուղայի Հայ կանանց գթութեան միութեան եւ Հայունեաց բարեգործական ընկերութեան ներկայացուցիչների, հայոց ազգային դպրոցների ուսուցիչների եւ Ծնողական խորհուրդների անդամների, «Քանանեան» դպրոցի աշակերտուհիների ու ծնողների եւ մի շարք այլ հրաւիրեալների:



Կարինէ Մինասեանը ծնել է Նոր Զուղայում, 1967 թականին: Նա աւարտել է Սպահանի պետական համալսարանի հասարակագիտութեան ճիւղը, ամուսնացած է եւ երկար տարիներ լինելով «Քանանեան» դպրոցի ուսուցչուհի, իսկ վերջին տարիներում՝ գործադիր փոխ-տեսուչ, ոչ միայն ջանք չի խնայել իր աշակերտների կրթութեան եւ զարգացման գործում, այլեւ բազմաթիւ անգամներ գնահատել է իր աշխատասիրութեան եւ նորարարութիւնների համար:

Պաշտօնական բացման ծրագրից յետոյ ներկաներն առիթ ունեցան մօտենալով ոճերով առանձնացած կրպակներին՝ ծանօթանալ ուսուցչուհու իւրօրինակ եւ բարձրաճաշակ ձեռարւեստին:

Յատկանշական է, որ ցուցահանդէսի կրպակներից մէկում վաճառքի էին դրել մի շարք ձեռագործներ, որոնց հասույթը յատկացելու է «Քանանեան» դպրոցի յաջողակ աշակերտների մրցանակների հայթայթման գործին:

«ՏԼՔՐԵՑՆԵՐԻ ՏԼՔՐԻՎՆ» ՆԻՒՐԻՎԾ ԴՎԱՍԿԵՍԱԿԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Ուրբաթ՝ հոկտեմբերի 3-ի երեկոյեան, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի եւ կազմակերպութեամբ թեմի Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի, տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ կրօնական-առողջապահական թեմաների շուրջ՝ դասախօսութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Մակար եպս. Աշգարեանի եւ դկտր. Ասպետ Իսաղուլեանի: Ծրագրին ներկայ էին նաեւ արժն. Տ. Մեսրոպ ա. քհնյ. Գալստանեանը, արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, ազգային մարմինների, միութիւնների ու հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները, հայ նահատակների ընտանիքները եւ համայնքի ժողովուրդ:

Սկզբում ողջոյնի եւ օրան պատշաճ խօսքով հանդէս եկաւ երեկոյի հաղորդավար, Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի անդամ Սարինէ Յարութիւնեանը: Հաղորդավարուհին ընթացքում ներկայացնելով նաեւ երեկոյի երկու դասախօսների կենսագրականը հերթաբար հրաւիրեց նրանց արտայայտելու:



Ծրագրի երկրորդ բաժնում բեմ հրաւիրեց դկտր. Ասպետ Իսաղուլեանը, ով ամփոփ ներկայացրեց տարիքի բարձրանալուն հետ կապած մարդու մարմնի փոփոխութիւնները եւ բժշկական անհրաժեշտ հետազօտութիւնները տարեցների համար:



Դասախօսական երեկոյի աւարտին գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանն արտայայտելով իր հայրական օրհնանքը կարեւորութեամբ ասաց. *«Աստուծ մեկ տրամաբանութիւն եւ ազատ կամք է տւել լաւն ու վատը ընտրելու: Մեզ պէտք է լաւն ընտրել, անհրաժեշտ պարագաներում դիմել բժիշկներին կամ հոգեբաններին, որպէսզի արժանաւոր ապրենք, արթուն եւ իմաստում ապրենք եւ քայլենք դէպի բարին ու ճշմարիտը»:*



Առաջին ելոյթն ունեցաւ գերշ. Տ. Մակար եպս. Աշգարեանը, ով դասախօսեց «Աստուծաշնչական հասկացողութեամբ տարեցը եւ նրա ազդեցութիւնը մեր կեանքում» թեմայի շուրջ: Սրբազան Հայրն իր խօսքում անդրադառնալով տարեց մարդու տեսակին, հետեւեալ յատկանիշերը յիշատակեց նրանց համար. սիրելի նահապետ, ընտանիքի հայր ու մայր, արդարամիտ դատաւոր, իմաստուն առաջնորդ, խոհեմ ղեկավար, ուղղամիտ խորհրդատու, կարիքներին ընդատաշող նախանձախնդիր, բարի հովիւ եւ կարգ ու կանոն պարտադրող: Սրբազան Հայրն իր խօսքի շարունակութեան մէջ աստուծաշնչեան նմուշներով անդրադարձ ունեցաւ տարեցների դերակատարութեանը:

Այս ծրագիրն ընդմիջեց գեղարուեստական ելոյթներով, որտեղ երգի կատարմամբ հանդէս եկան Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախմբի մեներգչուհիներ՝ Փարելի Թահմազեանն ու Լալա Ալեքսանդրեանը, իսկ ասմունքով՝ Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կոունկ» ասմունքի խմբի անդամ Կարէն Խանլարեանը:



Վերջում տեղի ունեցաւ ընդունելութիւն:

«ԵԿԷՔ ՅԻՇԵՆՔ ԱՆՑԵԱԼԸ ԶՈՒՂԱՅԻ»

ԽՈՐԱԳՐՈՎ ԷՇԵՆԱՐԿ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միության Երեցների միաւորի վարչութեան նախաձեռնութեամբ եւ միաւորի ամբողջ կազմի համագործակցութեամբ, ուրբաթ՝ 2014 թւականի սեպտեմբերի 5-ի երեկոյեան միութեան բացօթեայ տարածքում տեղի ունեցաւ ձեռնարկ, որի նպատակն էր համախմբել համայնքի անդամներին ու նախատեսած ձեռնարկով վերլիշեցնել մօտ անցեալում մեր ապրած կամ լսած այն պարզ ու անապաճոյն կեանքը, որ 21-րդ դարի մեքենայացած միջավայրը իլել է մեզանից:



Անցեալը վերապրեցնելու համար, միաւորը կազմակերպել էր մի փոքրիկ, բայց խոր բովանդակութեամբ ցուցահանդէս: Այն ներկայացնում էր ժամանակին օգտագործուող հագուստներ, կենցաղային իրեր, ձեռարեստի նմուշներ եւ ընտանեկան ու անհատական հին լուսանկարներ. մատակարարուող ուտեստները նոյնպէս ներկայացնում էին աւանդական խոհանոցը:



Ծրագրի ընթացքում Սեդա Բարդեանը միաւորի խօսքը ներկայացնելով՝ բնութագրեց ջուղայեցիների վարքն ու բարքը, սովորութիւններն ու աւանդոյթները, ջուղայեցու խոհանոցը, արւեստն ու արհեստը եւ նրան բնորոշ յատկապէս հայրենասէր, հիւրասէր ու աւանդոյթները պահպանող յատկանիշները:

Երեկոն գոհունակութեամբ վայելեց ներկայ բազմութիւնը:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՆԻՐԻՒԾՔՆԵՐ
ՎԱՅՈՑ ՑԵՂԱՍՊՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ԱՄԵԱԿԻՆ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաւտական միաւորի Գերագոյն մարմնի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ միաւորի ընդհանուր բանակումը 3 առ 6 սեպտեմբեր 2014 թւականին, Նամակերտ գիւղի բանակավայրում: Բանակումը նիրաւ էր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, որի կարգախօս էր ընտրուել՝ «Պայքար մինչեւ յաղթանակ» եւ ըստ այնմ պատրասուել էր սկաւտական թաշկինակի փողկապեր ու համապատասխան պաստառներ:



Բանակումի ընթացքում Գայլիկ-Արծիկ հատաձեւերը բաժանաւ էին երկու խմբի, իսկ Արի-Արեւնուշ հատաձեւերը եւ Երեց փաղանգը՝ երեք խմբի, որոնք բանակումի ընթացքում միմեանց հետ մրցեցին իրենց կեցածքով, կարգապահութեամբ, աշխուժութեամբ, ֆիզիքական եւ գիտական կարողութիւններով ու նախատեսած մրցոյթներով:



Բանակումի աշխատանքներին մաս էին կազմում Ռալին բանակավայրում, հետախուզական եւ կողմնացոյցի դասընթացները, Հ.Մ.Ը.Մ.-ական 10-րդ բանակումի զեկոյցը, խարոյկ վառելու ձեւերը, ճրագով մորսի աշխատանքը, գիշերային երկնքում աստղերի վայրը

Շարունակութիւնը՝ 37-րդ էջում

ՍՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԵՒ ՆԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻ ԲԱՆԱԽՕԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ՇՐԱԳԻՐ

Թւականիս հոկտեմբերի 11-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ բանախօսական եւ գեղարուեստական յայտագրով յագեցած ձեռնարկ, որի նախաձեռնութիւնը միութեան Մշակութային միաւորի վարչութեանն էր:

Հանդիսութեանը ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, քահանայից դասի եւ ազգային մարմինների ներկայացուցիչներ, Հայ դատի շրջանիս յանձնախմբի ներկայացուցիչը, ուսուցիչ-ուսանողներ, մշակութային ասպարէզում աշխատողներ, միութենականներ եւ այլ ներկաներ:

մեկնաբանութիւններով շարունակեց իր ելոյթը եւ եզրափակեց «Այցելականութիւն» խորագրով հեղինակային քերթածքի արտասանութեամբ:



Օրուայ առթիւ բանախօսելու համար Թեհրանից հրաւիրել էր իրանահայ անւանի բանաստեղծ Վարանդը: Յարգելի բանախօսն իր ելոյթն սկսեց օրան համահունչ բանաստեղծութեամբ, ապա անդրադառնալով համաշխարհայնացման եւ հակամշակութային այն խնդիրներին, որոնք այսօր վտանգում են ժողովուրդների մշակոյթը, նշեց, որ ազգային ոգեղէն հարստութիւնը փրկելու եւ յարատեւ դարձնելու մտահոգութիւնը պէտք է դարձնել մեր աօրեան: Բանախօսը բնութագրելով մշակոյթ հասկացութիւնը, մէջբերում կատարեց նաեւ անւանի հոգեբան դոկտոր-պրոֆեսոր Ալբերտ Նալչաջեանի գիտական կարծիքը մշակոյթի մասին եւ ասաց. «Անտեսել ու մոռանալ սեփական մշակոյթը, նոյնն է ինչ ապրել առանց էութեան, առանց ինքնութեան, առանց ոգու, առանց դէմքի ու դիմագծի»: Նա հետաքրքիր

Գեղարուեստական բաժնում, ղեկավարութեամբ տկն. Ռիմա Սիմոնեանի, «Կռունկ» համոյթի ասմունքի խմբից Մեղրի Ղուկասեանն ասմունքեց Համօ Սահեանի «Կը մնամ քեզ հետ» բանաստեղծութիւնը, Կարէն Խանլարեանը՝ Յ. Շիրազի «Անքաւելի մեղք»-ը, Թանհա Մինասեանը եւ Ալինա Ալեքսանդրեանը միասնաբար ներկայացրին Վահագն Դալթեանի «Կոմիտաս»-ը, որը համեմատ էր «Սարերի հովին մեռնեմ» եւ «Գարուն ա» երգերի հատումներով, իսկ Նազէ Ասատրեանը՝ Յ. Թումանեանի «Թագաւորն ու Չարչին» բալլադը: «Կռունկ» պարախումբը ներկայացրեց «Շատախի» եւ «Հանհիօ» պարային համարները, բեմադրութեամբ՝ Հայաստանից հրաւիրած խմբի պարուսոյց՝ Յակոբ Մարգարեանի: Մեներգերով հանդէս եկան Մշակութային միաւորի Էստրադային խմբի անդամներ՝ Նայիրի Ղազարեանը «Երեւան» ու «Հայաստան» երգերով եւ Չարենուշ Աղունեանը՝ «Գարնան հովի հետ արի» երգով:



Նշելի է, որ այս տարի լրանում է Կոմիտասի ու Թումանեանի ծննդեան 145 եւ Շիրազի ու Համօ Սահեանի ծննդեան 100-ամեակը եւ պատահական չէր, որ բեմում տեղադրւած էր նրանց պատկերները եւ երեկոյի հաղորդավարուհի՝ Շաղիկ Մատթէոսեանը Ս. Մեսրոպ Մաշտոցի մեծ վաստակին անդրադառնալուց զատ ծրագրի ընթացքում ներկայացրեց նաեւ նշեալ չորս մեծութիւններին:

Ծրագրի աւարտին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս.

Շարունակութիւնը՝ 38-րդ էջում

Սնունդի և առողջապահության մասին հարցազրույցի համար
Սնունդի և առողջապահության մասին հարցազրույցի համար



2014 թվականի սեպտեմբերի 4-5-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան հիւրընկալութեամբ, միութեան մարզասրահում կայացան Իրանի կանանց բասկետբոլի Ա կարգի լիգայի առաջին խմբի երկրորդ փուլի խաղերը, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան, Թեհրանի «Սամա», Ուրումիայի «Շահոդադի», «Հէյաթէ բասկետբոլէ Սիւթան-Բալուչեսթան» եւ «Հէյաթէ բասկետբոլէ Քազեռուն»-ի թիմերի մասնակցութեամբ:

Խաղերի ընթացքում Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան խումբը մրցելով «Հէյաթէ բասկետբոլէ Սիւթան-Բալուչեսթան» եւ «Հէյաթէ բասկետբոլէ Քազեռուն»-ի հետ յաղթանակ արձանագրեց:

Նշելի է, որ օգոստոսի 18-20-ին «Հէյաթէ բասկետբոլէ Քազեռուն»-ի հիւրընկալու-

թեամբ, Քազեռունում տեղի ունեցած նոյն կարգի մրցութիւնների առաջին փուլում Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան աղջկանց բասկետբոլի խումբը Թեհրանի «Սամա» եւ Ուրումիայի «Շահոդադի» խմբերի հետ ունեցած մրցութիւններում դարձեալ յաղթանակով է փակել մրցաշարը:

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան աղջկանց բասկետբոլի խմբի անդամներն են՝ Մեղմիկ Հազարմալեանը, Նազելի Պողոսեանը, Լուսինէ Ասատրեանը, Սարա Ներսիսեանը, Լուսինէ Սէթ-Աղայեանը, Նիկի Մարկոսեանը, Նարէ Կիրակոսեանը, Զարինէ Ղարիբեանը, Արծիկ Ղազարեանը, Սելին Խոջամալը, Մարինէ Հայրապետեանը, մարզիչը՝ Սահլէ Նեջաթին եւ պատասխանատուն՝ Ռիմա Պետրոսեանը:

Ընդհանրելով խմբի անձնակազմին եւ պատասխանատուներին, մաղթում ենք նոր յաղթանակներ:



Շարունակութիւն 35-րդ էջից

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒԾ ՆԻՒՐԻԱԾ...



գտները, դասախօսութիւններ՝ «Համբիկ Սասունեանի կենսագրութիւնը», «Ս. Ամենափրկչեան վանքի Յովսէփ Արեմաթացի եկեղեցու 350-ամեակը» եւ «Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը» թեմաներով: Բանակումի վերջին օրւայ ընթացքում տեղի ունեցաւ արշաւ՝ բանակավայրից դուրս, որտեղ սկսուեցին իրենց փոխանցած նիւթերի հիման վրայ գտան արշաւի ճիշտ ուղին եւ ուղղորդեցին խնդիրների պատասխանները ձեռք բերելով, աւարտին վառելով խարոյկ եւ պատրաստելով համեղ ճաշ:

Ըստ սկսուողական բանակումների աւանդութի, գիշերները սկսուեցին ունեցան խրատներ, որտեղ երգեցին ազգային-յեղափոխական երգեր:

Բանակումի վերջին գիշերը տեղի ունեցաւ խարոյկահանդէս, որին խմբերը պատրաստել էին նախօրոք եւ իւրաքանչիւր խումբ հանդէս եկաւ իր իսկ գրած երգերով ու կանչերով, որոնք վերաբերում էին բանակումում ապրած օրերին ու պահերին:

Բանակումից իւրաքանչիւր սկսուողական վերադարձաւ յուշերով եւ իւրացրած գիտելիքներով, չմոռանալով բանակումի կարգախօսը՝ «Պաքար մինչեւ յաղթանակ»:

Հ.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆ 10-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ

Հայաստանում Հ.Մ.Ը.Մ.-ական 10-րդ ընդհանուր բանակումի բացումը տեղի ունեցավ հինգշաբթի՝ 2014 թվականի յուլիսի 31-ի յետմիջօրէին Բիւրականի բանակավայրում, ապա սկսուեցին տեղափոխւեցին Երեւան, որտեղ Ազատութեան հրապարակից տողանցեցին դէպի Հանրապետութեան հրապարակ եւ հիւրերի ներկայութեամբ պաշտօնապէս բացւած յայտարարեց բանակումը:



Բանակումին իրենց մասնակցութիւնն էին բերել Հայաստանից, Լիբանանից, Սիրիայից, Յորդանանից, Քուէյթից, Իրաքից, Երուսաղէմից, Միացեալ ճահանգներից, Կանադայից, Աւստրալիայից, Հարաւային Ամերիկայից, Ֆրանսիայից, Անգլիայից, Հոլանդիայից, Յունաստանից եւ Իրանից շուրջ 800 սկսուներ: Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկսուական միաւորը ծրագրին մասնակցել էր 7 սկսուներով:

Աշխարհասփիւռ հայ սկսուները, մէկտեղելով հայրենիքում, 10 անմոռանալի օրեր ապրեցին, ծանօ-

թանալով հայրենի պատմութեանը եւ բնութեանը, իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Յեղասպանութեան զոհերին եւ Արցախեան պատերազմի ճահատակներին, այցելեցին Սարդարապատ, Էջմիածին, քանի եկեղեցիներ, վանքեր եւ Վազգէն Սարգսեանի անան զօրանոց: Նրանք միմեանց հետ մրցեցին ֆիզիքական եւ գիտական բնագաւառներում, նաեւ առիթ ունեցան տաղաարների միջոցով ծանօթանալու երկրների մշակոյթին ու կենցաղին:



Իրանի պատիրակութիւնը լաւագոյն բանակավայրերի, զարգացման մրցոյթի եւ երկրի տաղաարի ներկայացման իմաստով լաւագոյնների շարքում 3-րդը հանդիսացաւ:

Բանակումի փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ օգոստոսի 2-ին:

Սկսուները բազմաթիւ ու հետաքրքիր յուշերով եւ փորձառութիւններով վերադարձան իրենց երկրները, որպէսզի իրաքանչիւրն իր սովորածը փոխանցի իր միութեան միւս սկսուներին:

Շարունակութիւն 36-րդ էջից

ՄՐԻՑ ԹԱՐԳՄԱՆՆԱՅ ԵՒ ՆԱՅ...

Չարեանը եզրափակիչ խօսքում ակնարկելով Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Թարգմանիչ վարդապետների սրբազան գործին, անդրադարձաւ հայ մշակոյթի առթիւ նոյն օրը Ս. Ամենափրկչեան վանքի «Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում Ս. Պատարագով սկսած, Մեսրոպ Մաշտոցի կիսանդրու մօտ հայոց ազգային դպրոցների աշակերտական ելոյթներով շարունակւած եւ երեկոյի ձեռնարկով աւարտւած տօնակատարութեանը, ապա գնահատանքի խօսք ուղղեց յարգելի բանախօսին, գեղարեստական յայտագրի մասնակիցներին ու պատասխանատուներին: Սրբազան Հայրն իր խօսքի մէջ անդրադառնալով ահաբեկչական խմբաւորման միջոցով Սիրիայի Դեր Զոր քաղաքի Սրբոց Նահատակաց եկեղեցու պայթեցմանը, միեւնոյն ժամանակ մատնացոյց արեց բեմում ներկայ երիտասարդութեանը եւ ասաց, որ եթէ մենք ունենք նման երիտասարդութիւն, թշնամուն չի յաջողի սպանել մեր հոգին եւ հայր կապրի յախտեան:



ՀԱՅՎԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԾԻ ՆՇՈՒՄԸ ՀԱՅ ՈՒՍ. «ՀՂԱՐՄՈՂԱԿ» ՄԻՈՒԹԵԱՆ Ն.Ջ. ՄԱՍՆԱԿՃԻԴԻ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Հինգշաբթի՝ սեպտեմբերի 25-ի երեկոյան, Հայ ուս. «Չհարմահալ» միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի յարկի տակ, նոյն միութեան վարչութեան նախաձեռնութեամբ նշեց Հայաստանի հանրապետութեան անկախութեան 23-րդ տարեդարձը, որին ներկայ էին միութեան անդամներն ու մի շարք հրաւիրեալներ:

ընդունելու եւ երկրի նկարագրի դրսևորման հնարաւորութիւն է: Բնանախօսն անդրադառնալով նաեւ Հայաստանի հանրապետութեան վերանկախացմանը, այն մեր ազգի համար բացարձակ արժէք համարեց եւ կոչ արեց, որ ապագայ սերունդներին ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի իդեալից չզրկելու համար՝ տէր կանգնել երկրին՝ անկախութիւնը վտանգող ներքին եւ արտաքին սադրիչ երեւոյթների դիմաց:



Ծրագրի բացումը կատարեց Հ.Հ.-ի օրհներգի յուրընկալս ունկնդրութեամբ, որին յաջորդեցին երեկոյի հանդիսաւար Նոռա Ծափիջանեանի ողջոյնի եւ օրւան պատշաճ արտայայտութիւնները:

Ծրագրի շարունակութեան մէջ Նոռա Ծափիջանեանն ասմունքեց Վաղինակ Սուքիասեանի գրչին պատկանող մի բանաստեղծութիւն, որից յետոյ ծրագրի գեղարուեստական բաժնում Փարելի Թահմազեանը ելոյթ ունեցաւ երգի, իսկ Վեհանուշ Խողաբախշեանն ասմունքի կատարումներով:



Այնուհետեւ անկախութեան գաղափարի շուրջ բանախօսութեամբ ելոյթ ունեցաւ Սոնիկ Բաղումեանը, ով անդրադառնառով երկիր-պետութիւնների ստեծմանը, պետականութիւնը համարեց իւրաքանչիւր ազգի ամենամեծ կազմակերպութիւնը, որն իրականանում է անկախութեան ձեռք բերմամբ: Նա իր խօսքի շարունակութեան մէջ բնութագրելով անկախութիւնը, կարեւորութեամբ նշեց, թէ այն սեփական կամքով որոշումներ

Աւարտին բեմը տրամադրեց միութեան վաստակաւոր անդամ արժն Տ. Մեսրոպ աւ. քինյ. Գալստանեանին օրւայ խորհրդի առնչութեամբ արտայատելու: Նա իր խօսքում Հ.Հ.-ի անկախութեան օրը մեծ տօն համարելով՝ նշեց, որ դրօշը, զինանշանը եւ օրհներգը երկրի անկախութեան երաշխիքն են եւ անկախութիւնն այն միջոցն է, որն արժէք է տալիս ժողովրդին: Քահանայ հայրը վերջում շնորհաւորելով համայն հայութեան տօնի՝ Հ.Հ.-ի անկախութեան օրւայ կապակցութեամբ, մաղթեց, որ անկախութեան արժէքը գիտակցելով՝ ջանք չխնայել Հայրենքի հզօրացման եւ արդար պահանջների իրականացման ուղղութեամբ:

Պաշտօնական բաժնից յետոյ տօնական խանդավառ երեկոն շարունակեց առաւել ջերմ մթնոլորտում, երբ ներկաներն իրենց կամաւոր ելոյթներով միջոցառումը ողողեցին հայ երգով եւ վայելեցին անուշաբոյր ճաշատեսակները:

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆԻՐԻԱԾ
«ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏԱՐԻԱՆ»**

Ծաբաթ՝ հոկտեմբերի 4-ի երեկոյան ժամը 5-ից, Նոր Զուղայի հայոց ազգային ծերանոցի շրջափակում տեղի ունեցաւ դաշտահանդէս նկիրած «Տարեցների տարւան», մասնակցութեամբ Նոր Զուղայի եւ Ծահինշահրի հայ համայնքների տարեցների, ծերանոցի բնակիչների եւ Նոր Զուղայի Հայ կանանց գթութեան միութեան անդամուհիների:



Գթութեան միութեան «Տարեցների տարւայ» միջոցառումների կազմակերպիչ յանձնախմբի նախաձեռնութեամբ իրականացաւ այս դաշտահանդէսը, բացաւ յայտարարուեց նոյն միութեան վարչութեան նախագահուհի Արմինէ Սիմոնեանի բարիգալստեան խօսքով, ով այսպէս ասաց. «Տարեցները մեր տան յոյսն ու յոյսն են, եւ մենք պարտականութիւն ունենք յարգել, սիրել ու խնամել նրանց: Այսօր ի մի ենք եկել տօնելու այն սիրելիների տօնը, ովքեր մեր անցեալի ատենակալն ու ապագայի երթն են»:

Միջոցառման հանդիսավար Հայդուկ Վարդեանցեանը, հաճելի հումորներով եւ խօսքերով երեկոն անմոռանալի դարձրեց ներկաների համար:



Ծրագրում ուրախ երաժշտութիւնից բացի տեղ էին գտել զանազան մրցութիւններ, որոնց արդիւնքում պարգեատուրեցին յաղթողները: Մրցոյթների շարանում ուշագրաւ էր յատկապէս գիտելիքների մրցոյթը, ինչը մեծ խանդավառութիւն ստեղծեց տարեցների մօտ: Պարգեատուրեցին նաեւ ներկաների մէջ ամենաշատ թոռ եւ ծոռ ունեցող տարեցները:

Հայ կանանց գթութեան միութեան անդամուհիների կողմից պատրաստուած խմորեղէններով եւ պատառիկներով հիւրասիրուեցին բոլորը, իսկ տարեցներից ոմանք երեկոն առաւել պայծառացրին իրենց կատարած երգերով ու ասմունքներով:

**Ն.Ջ. ԲԱԹ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ»
ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱԲԻՆՇԱՐԻ
ՍԱՍՆԱԾԻՒՂԻ ՍԱՐՁԻԿՆԵՐԸ՝ ԻՐԱՆԻ
46-ՐԴ ԲԱՍՏԱԲԱԹԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ**

Ն.Ջ. Հայ Մ.Մ.«Արարատ» միութեան Ծահինշահրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ, մարզական միաւորի մարզիկ-ուհիներն իրենց պատասխանատուների հետ, թուով 21-հոգի, մասնակցեցին Իրանի 46-րդ շրջանի Համահայկական խաղերին: Այս տարի մասնաճիւղի մարզիկ-ուհիները մասնակցեցին ճատրակի ու թեթեւ ատլետի մարզաձեւերում. մինչեւ 10-տարեկանների տարիքային խմբում Արգիշտ Բեշիշեանը գրաւեց պատաւոտ 2-րդ հորիզոնականը, իսկ 10-18 տարեկանների խմբում ունեցան թիմային յաղթանակ, գրաւելով նոյնպէս երկրորդ հորիզոնականը:



Մասնաճիւղի վարչութեան նախագահ Գեիկ Խաչատրեանը մասնակիցներին քաջալերելու համար հինգ օր շարունակ եղաւ բանակատեղում: Օգնեց իր խորհուրդներով եւ յորդորեց լինել կարգապահ, ցուցաբերել օրինակելի վարք եւ բարձր պահել միութեան անունը:

Պատասխանատուներից Անիթա Խաչատրեանը եւ Վահէ Թահմազեանը հարցազրոյց տուցին Համահայկական խաղերի եւ Հանրային կապի գրասենեակի պատասխանատուներին: Իրենց խօսքում առաջարկելով աւելացնել Ֆուտսալի մարզաձեւը, նրանք շնորհատրել են Հ.Մ.Ա.Կ-ի հիմնադրման 70-ամեակը եւ ցանկացել նորանոր յաջողութիւններ:

46-րդ շրջանի Իրանի Համահայկական խաղերի փակումը տեղի ունեցաւ Սեպտեմբերի 20-ին եւ բոլոր մասնակիցները բարձր տրամադրութեամբ թողեցին բանակավայրը:

Հոկտեմբերի 5-ին մասնաճիւղի վարչութիւնը 46-րդ Համահայկական խաղերին մասնակից մարզիկ-ուհիների համար կազմակերպել էր գնահատանքի երեկոյ:



Շարունակութիւնը՝ յաջորդ էջում

ՍՐՔՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԸ ԸՆՀԻՆՆԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ թականիս հոկտեմբերի 12-ի առաւօտեան, Սրբոց Թարգմանչաց տօնի առիթով Ծափինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մատուցեց Ս. եւ անմահ Պատարագ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի ձեռամբ եւ «Նարեկ» երգչախմբի երգեցողութեամբ:

Օրայ խորհրդին ներկայ էին Ծափինշահրի հայ համայնքի վարչութիւնը, «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի, «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ուսուցչական կազմերն ու աշակերտութիւնը, ծնողները եւ համայնքի անդամները:



Հոգշ. Հայր Սուրբն արարողութեան ընթացքում, իր քարոզում մեծարելով հայ գիր ու դպրութեան հիմնադիրներ Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Ս. Սահակ Պարթեւի՝ հայ ազգին մատուցած մեծ ծառայութիւնը, խրախուսեց հայ աշակերտներին բարձր պահել նրանց սրբազան աւանդը, վեհ պահել մայրենի լեզուն եւ ոչ մի ջանք չխնայել այն զարկ տալու նիրական գործում: Իր բովանդակալից քարոզում Հայր Սուրբը հանգամանօրէն անդրադարձաւ հայ ուսուցչի նշանակալից դերին՝ հայ աշակերտի հայեցի դաստիարակութեան, նրա հոգին կրթելու եւ հայավայել զարգացնելու մէջ. անժխտելի դեր, որը տոգորած է հայ աշակերտի հանդէպ ունեցած անհուն սիրով ու գուրգուրանքով:

Իսկ իր խօսքն ուղղելով բոլորին Հայր Սուրբն այսպէս արտայայտեց. «*Ես կոչ եմ անում բոլորին, այստեղ հաւաքւած մեզ՝ իւրաքանչիւրիս՝ ծնող, պատախանատու, ուսուցիչ, աշակերտ. եկէ՛ք այ-*

սօր մեր կեանքում նոր քարտէզ գծենք եւ անունը դնենք Աստուածաշունչ՝ կարդայ Աստուածաշունչ, ապրել Աստուածաշունչ եւ մանաւանդ նայել Աստուածաշունչին, որպէսզի ամրանայ մեր քրիստոնէական սէրն ու հաւատքը: Այսօր մեր տօնն է, հայ մշակոյթի տօնն է, հայ ազգի տօնն է եւ հայ եկեղեցու տօնն է: Թող ապրի հայ աշակերտը, թող աճի, զարգանայ հայ ուսուցչի անունը, թող Աստուած պահի, պահպանի հայ ընտանիքը, հայ աշակերտը, հայ ուսուցիչը եւ հայ դպրոցը, որպէսզի նոր Մաշտոցներ, նոր Սահակ Պարթեւներ, նոր Թարգմանիչ վարդապետներ ծնեն, թարգմանեն նոր հայ Աստուածաշունչներ, նոր հայ գրքեր, որպէսզի մեր ազգը, մեր մշակոյթը աւելի պայծառանայ, հզօրանայ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի»: Նա իր բարեմաղթանքի ակարտին, իր եւ Համայնքին վարչութեան անունից շնորհակարտեց Սրբոց Թարգմանչաց տօնը եւ ոյժ ու կորով մաղթեց հայ մշակույթի բոլոր գործիչներին:



Եկեղեցական արարողութիւնից յետոյ, ուսուցիչները եւ աշակերտները լուսանկարւեցին Հայր Սուրբի հետ:



Շարունակութիւն՝ 40-րդ էջից

Ն.Ջ. ԱՍԹ Ս.Ս. «ԱՐԱՐԱՏ» ՍԻՌԻՅԵԱՆ ՇԱԲԻՆՇԱԲԻ...

Սկզբում վարչութեան նախագահը ողջունեց ներկաներին եւ շնորհակարտեց ձեռք բերած յաջողութիւնների համար, նրանց ցանկանալով նորանոր մրցանակներ, յուսալով, որ յետագայում մրցութիւններին կը ներկայանան աւելի լաւ մարզավիճակում եւ կը ցուցադրեն աւելի որակեալ խաղ, ապա կատարեց մեղալաբախշում եւ վկայագրերի յանձնում:

Մարզիկներն իրենց տպաւորութիւններով կիսեցին վարչութեան անդամների եւ ներկաների հետ: Հանդիպումն անցաւ ջերմ մթնոլորտում: Վերջում կատարեց համեստ հիւրասիրութիւն:

«ՄՈՎԱԷՍ ԽՈՐԵՆԱԿԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ՉՆՈՐՀՈՒՄ ՊՐՆ. ՆՈՒՆ ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 23-ՐԳ ՏԱՐԵԳԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵԻԻ Է ԱՐԺԱՆԱՅԵԼ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՊՐՆ. ՆՈՒՆ ՄԻՆԱՍԵԱՆԵ:



Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրերով Հայաստանի հանրապետության անկախության 23-րդ տարեդարձի առիթով, գիտության, տնտեսության, առողջապահության, մշակույթի ոլորտներում, ինչպես նաև Սփիւռքի մի խումբ ներկայացուցիչներ պարգևատրուեցին պետական բարձրագույն պարգևներով: Պարգևատրման արարողությունը տեղի ունեցավ սեպտեմբերի 21-ին, Հ.Հ.-ի նախագահի նստավայրում:

Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ պետական պարգևի է արժանացել Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը՝ ստանալով «Մովսէս Խորենացի» մեդալ:

Յանուն Սպահանի հայոց թեմի առաջնորդ

գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի եւ ազգային մարմինների, շնորհաւորում ենք այս կարեւոր առիթը, որը պատուաբեր է ոչ միայն Թեմական խորհրդի ատենապետի, այլ ամբողջ համայնքի եւ ազգային մարմինների համար եւ նրա համար ցանկանում ենք նորանոր յաջողություններ եւ նւանումներ ազգային կեանքում:

ԴԻԻԱՆ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՉՆՈՐՀԱԽՈՐԱՆՔ



Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ Ն.Ձ. Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու 350-ամեակի նշման շրջանակներում Նոր Զուղա ժամանած Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի ձեռամբ «Ասպետ»-ի շքանշանով պարգևատրուեցին Թեմիս վաստակաշատ ազգայիններ՝ Վրէժ Տէր Մարտիրոսեանը, Գարեգին Մարկոսեանը, Հրայր Ծահնագաբեանն ու Ժորժիկ Աբրահամեանը:

Մեծարելով նրանց անգնահատելի դերն ու աւանդը ազգապահպանման գործում, յատկապէս սփիւռքեան դժարին պայմաններում, յանուն Սպահանի հայոց թեմի առաջնորդ

գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, ազգային մարմինների եւ ողջ ժողովրդի շնորհաւորում ենք այս կարեւոր առիթը, մաղթում ենք նրանց նորանոր յաջողություններ եւ ձեռքբերումներ:

ԴԻԻԱՆ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Յանուն Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, Թեմիս ազգային մարմինների եւ ողջ ժողովրդի շնորհաւորում ենք շրջանիս Հայ դատի յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դալթեանին եւ Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտ. վարչութեան նախագահ Մասիս Մինասեանին՝ Հ.Հ.-ի Վարչապետի շքանշանին արժանանալու առիթով:

Գնահատելով նրանց ներդրումը հայ ժողովրդի իրաւունքների հետապնդման, հայապահպանութեան, հայակերտման եւ հայկական ազգային մշակույթի պահպանման գործում, ցանկանում ենք նորանոր վերելքներ ու նւանումներ ազգային-հասարակական ոլորտներում:

ԴԻԻԱՆ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Զ.Հայոց Առաֆելական Եկեղեցեայ Վարչութեան

Ս. Գէորգ Եկեղեցի

- 500,000 ուիալ. Արսէն Ղազարեան
- 200,000-ական ուիալ. Էմմա Մարտոյեան, Անուշ Ղարախա- նեան՝ Տիգրան եւ Արարար Ղարախանեանների յիշատակին, Ծատուրեան՝ 2 հատ խաչի դիմաց, Նահիդ Հաւայի, Զատան- բախթ, ոմն
- 100,000-ական ուիալ. Ծահին Հաւայի, Ֆառանգիզ Եաւ- Մոհամմադի

Խաչի դիմաց

- 500,000 ուիալ. Արէն Ռոստոմեան
- 250,000 ուիալ. Նայիրի եւ Նինարէ Մարկոսեաններ
- 100,000-ական ուիալ. Ռեմոնդ Մալպեան, Այդա Պարսա- մեան, Անահիտ Բարսեմեան՝ իր մօր՝ Աղանի Ղարիբեանի յիշա- տակին, ոմն

Եկեղեցու տօնի առթիւ, մատաղացու դառան համար

- 6,000,000 ուիալ. Մարջան Մանջուկեան
- 5,200,000 ուիալ. Վահան եւ Սոնիա Սոհրայիներ
- 5,070,000 ուիալ. Հենրիկ Համբարձումեան
- 5,000,000 ուիալ. Մինաս Պօղոսեան՝ իր թոռազաւակների՝ Դիմ Ասատրեանի եւ Դանիէլ Պօղոսեանի ծննդեան առթիւ
- 4,810,000 ուիալ. Արմոնո Յովսէփեան
- 4,300,000 ուիալ. Նարեկ Թորոսեան
- 3,000,000 ուիալ. Էլիամ Առիանաֆառ

Եկեղեցու տօնի առթիւ փոխան մատաղի

- 3,250,000 ուիալ. ոմն
- 2,000,000-ական ուիալ. Թումանեան, Գառնիկ Զարգարեան
- 1,500,000-ական ուիալ. Իշխան Թահմազեան, Զաւէն Կի- րակոսեան
- 1,200,000 ուիալ. Սիւիան եւ Լեոնիկ Ղազարեաններ
- 1,000,000-ական ուիալ. Արտուշ, Ֆրիդա, Գեւիկ եւ Գեղանի Ղարիբեաններ, Երանդ Պօղոսեան, Արմինէ Մովսիսեան, Գա- յանէ Գէորգեան, Մուշեղ Այազեան, Սեւակ եւ Անայիս Թորո- սեաններ, Գրիգորիս Աբգարեան, Սաշա Մելքոնեան, Ռեբեքա Կարապետեան, Արմոնո եւ Համբիկ Համբարջեաններ, Ծաղկուշ Համբարջեան, ոմն (2 պարագայ)

- 800,000 ուիալ. ոմն
- 500,000-ական ուիալ. Մասիս Դիլանջեան, Անդրանիկ եւ Անահիտ Յարութիւնեաններ, Ալլարդ Զարգարեան, Միրօ Խա- չիկեան, Էրվին եւ Էդիմ Յովսէփեաններ, Սերոժ Գալստանեան, Լիլիթ Քէշիշեան, Արին Նազարեան, Արքի եւ Թալին Թորո- սեաններ, Ռադիկ եւ Մայա Նահապետեաններ, Ռուբէն Մարկո- սեան, Գառնիկ եւ Արմինէ Կիրակոսեաններ, Էդնա Մանուկեան, Արսիս Արմօ եւ Էրվին Գեօ Անդրիասներ եւ Նինել Զանի Ստե- փանեան եւ Նանոր եւ Յովիկ Կիրակոսեաններ, Նարեկ եւ Նինել Օրօջեաններ, Գրիգոր Մովսիսեան՝ Աննիկ Մովսիսեանի յիշա- տակին, Կարէն եւ Մարինա Ղարախանեաններ, Ալֆրեդ Բարու- մեան, Նոէլ եւ Արագ Աբգարեաններ, Էրիքէ Մուրադեան, Արաքս Բարսեղեան, Գրիշ եւ Վարդուհի Օհանեաններ, Մա- ուիթ Խոջեմալ, Վարուժ եւ Սթէլլա Վարդանեաններ, Կարինէ Զարգարեան, Շիրակ Յովսէփեան, Սուրիկ Սէթ-Աղայեան, Նարբէլ եւ Անասիկ Կարապետեաններ, Սելին եւ Կարէն Ղարի- բեաններ, Շիրակ եւ Արգիշտի Ղարիբեաններ, Դուրան, Անի եւ Արսիինէ Տէր Յովհաննիսեաններ, Ժորժիկ եւ Թելմա Հայրապե- տեաններ, Ծաղկուշ Աղազարեան, Պօղոս Թահմազեան, Թենի եւ Թոմիկ Բարդամեաններ, Աբդալ Մարութեան, Սերոժ Ծահի- ջանեան, Հերոս Տէր Մարտիրոսեան, Ղազարոս Պետրոսեան, Թինա Մոհիթ, Էլիամ Դադխան, Հոսէյնի

- 300,000-ական ուիալ. Արթուր Քամարգարեան, Ալլերթթ Ղազարեան, Մելանիա, Էլենա եւ Քեփն Օհանեաններ, Լալա

Բաղդասարեան, Էմիլ Մարկոսեան, Անգիլէ, Նոնի եւ Լիա Մարկոսեաններ, Ժիլբերթ Ղազարեան, Գուրգէն Թահմազեան, Մելինէ Աւանէսեան, Գեւիկ Անդրիաս Խաչատրեան, Գեւիկ Ասատրեան, Սերժիկ եւ Ալենուշ Ասատրեաններ, Թալին Կարա- պետեան, Սեդրակ Պետրոսեան, Վերգինէ Միրզախանեան, Հրաչիկ Իւնիկեան, Հակոբ Պետրոսեան, Ալլին Աբդալեան, Մանաս Աղախանեան, Ասպետ եւ Լորեթա Վարդանեաններ, Անդրէ Սիմոնեան, Իւթ Շիրանեան

- 250,000-ական ուիալ. Հանրիթ Առաքելեան, Ալէքս, Անթթ, Էդիմ, Վիլիամ եւ Արմինէ Ծահմիրզայեաններ, Նայիրի եւ Նինա- րէ Մարկոսեաններ, Ռուբէն եւ Գէորգ Խէզըլեան, Գեւիկ Խա- չատրեան, Ադէլի

- 200,000-ական ուիալ. Նարբէլ Փանոսեան, Իշխանուհի Քա- յանթար-Օհանեան, Վահէ եւ Արեգա Յարութիւնեաններ, Անիթա Աբգարեան, Արաքս Յովսէփեան, Գարիեանա Թահմազեան, Աստղիկ Թահմազեան, Սարիկ Ղազարեան, Էլէդա Յովսէ- փեան, Մարգարիտ Ալէքսանդրեան, Երեմ եւ Մագի Յարութի- նեաններ, Թումաթարեան, Արուստակ Գուրգէնեան, Արաքս Տէր Մարտիրոսեան, Արաքս, Էմիլ, Արսիինէ, Արթին, Արսինէ եւ Վարազ Ղազարեաններ, Էլիշա Մանգասարեան, Էշմին Խաչի- կեան, Արայիկ Թորոսեան, Մոնթէ Նազարեան, Սիլվարդ Թորո- սեան, Ծահէն եւ Հրանուշ Յովհաննիսեաններ, Սիրան Սարեան, Էլէդա Յովսէփեան, Նարդ Յակոբեան, Ժանթթ Աղախանեան, Ծանթթ Աբգարեան, Սէրլի Պարսամեան, Էդարդ Բարսեմեան, Նարինէ Քէշիշեան, Արամէ եւ Արմօ Ասատրեաններ, Հրակ Ղու- կասեան, Կարէն Խաչատրեան, Մարգարիտ Հերոսեան, Մաուի- թա Կարապետեան, Ռանդոլֆ Սահակեան, Նայիրի Ծահիջա- նեան, Էդարդ եւ Քլարիս, Երան Խուդավերդեան, Արսիինէ եւ Արամէ Նաասարդեաններ, Մագի Հայկունեան՝ իր ծնողների յի- շատակին, Զաւէն Ղարիբեան, Սիլվարդ Աղախանեան, Գառնիկ Սարգսեան, Սրբուհի Մովսիսեան, Նարինէ Բարդեան, Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ, Հերմինէ Թահմազեան, Սոֆիկ Հայրապետեան, Լորեթա Յակոբեան, Նարեկ Յովսէփեան, Հե- րոս Սիմոնեան, Մինաս Մելքոնեան, Մասիս Յովհաննիսեան, Մելինէ Հայրապետեան, ոմն (3 պարագայ)

- 150,000-ական ուիալ. Սերժիկ Մարութեան, Անաշէ եւ Արա- մէ, Վեդի Օրօջեան, Յարութ Ղուկասեան

- 100,000-ական ուիալ. Ռոբերթ եւ Ռիմա Ղարախանեաններ, Համասիիտ Մարգարեան, Թամար Գրիգորեան, Պաշտա Թահմազեան, Հրանուշ Փանոսեան, Լուդիկ Յովսէփեան, Բա- լաս Դիլանջեան, Արմոնո Մինաս Խաչիկեան, Ալէքս Փանո- սեան, Խաթունիկ Մարգարեան, Օֆիկ Սիմոնեան, Լիդա Վար- դանեան, Հրանուշ Բոլբոլեան, Վարթուշ Ասատրեան, Թորգոմ Բարսեղեան, Ռիմա Դիլանջեան, Մհեր եւ Էլենա Խանլարեան- ներ, Սրբուհի Ալէքսանդրեան, Անիթա Մալիկեան, Խաթուն Յով- սէփեան, Ռոնի Թորոսեան, Թադէ Խուդաբախշեան, Վաշէ Ծա- հիջանեան, Սերոժ Աւանէսեան, Լորիկ Բաղդասարեան, Օրէթ Բաղդասարեան, Սոնիկ Կիրակոսեան, Լուսիկ Տէր Ստեփանո- սեան, Արաքս Աւետեան, Գէորգ Յովսէփեան, Անահիտ Ստե- փանեան, Ծաքէ Բարսեմեան, Երանդ Խաչիկեան, Մարգար Մի- նասքանեան, Ժենիկ Քէշիշեան, Ովսանա Ղարախանեան, Սո- նիկ Սուքիասեան, Վրէժ եւ Ռոզա Յարութիւնեաններ, Աբգար Ղազարեան, Նարդ Վարդանեան՝ Եսայի եւ Սերժիկ Վարդա- նեանների յիշատակին, Բալիկ Մարտիրոսեան, Ծարբաթ Խու- դավերդեան, Նազիկ Խուդավերդեան, Սարօ Ծահբազեան, Ռոդրիկ Սարհադեան, Աննիկ Յովսէփեան, Արագ Ղարախա- նեան, Ռեմիա Բաբախանեան, Անահիտ Սարհադեան, Արաքս Յովսէփեան, ոմն (3 պարագայ)

- 50,000-ական ուիալ. Գառնիկ Մանուկեան, Հայկանուշ Հայ- րապետեան, Զարթիկ Սուքիասեան, Կարէն Խանլարեան, Ծա-

միր Գաբրիելեան, Երանուհի Գրիգորեան, ոմն (3 պարագա)
- 40,000 ուսլ. ոմն

Ս. Ստեփանոս եկեղեցի, Ս. Աստուածածնի տօնի առթիւ

- 500,000-ական ուսլ. Ռոզի Դաւթեան՝ իր թոռների՝ Կարէ-
նի եւ Նայիրիի համար, Յասմիկ Թորոսեան, Վարուժ եւ Սթելա
Վարդանեաններ

- 300,000-ական ուսլ. Արթին Դաւթեան, Նազիկ Ետզա-
րեան

- 200,000-ական ուսլ. Վարդուշ Յովսէփեան, Իւեթ Ծիրա-
նեան, Մեղդի Օհանեան, Ռայա Խուրավերդեան, Լեոնիկ Ղա-
զարեան, Ծաղկուշ Ղազարեան, Սօնեա Դիլանչեան, Նարինէ
Միրզախանեան, Գալստան Սարուխանեան, Լալա Բաղդասա-
րեան, Ալվարդ Զարգարեան, Սանդրա Խուրաբախշեան, ոմն (2
պարագայ)

- 150,000-ական ուսլ. Հերմինէ Թահմազեան, Վանէ եւ Անի
Տէր Մարտիրոսեաններ

- 100,000-ական ուսլ. Լիդա Ծառուկեան, Սերոժ Աւանի-
սեան, Սինթա Պողոսեան, Վազրիկ եւ Քառույիկ Վարդանեան-
ներ, Լիլիկ Ասատուրեան, Ռեմոնդ Վարդանեան, Մարինա Ղա-
րախանեան, Ովսան Ղարախանեան, Խաթուն Խաչիկեան, Կի-
տուշ Օհանեան, Ժանեթ Աղախանեան, Զաւարդ Մինասեան,
Անահիտ Յարութիւնեան, ոմն

- 50,000-ական ուսլ. Հայկուշիկ Ծատուրեան, Վահան Վար-
դանեան, Հռիփսիմէ Թորոսեան, Եղսօ Ծահբազեան, Ովսան
Ստեփանեան, ոմն

Ս. Մինաս եկեղեցի, Ս. Աստուածածնի տօնի առթիւ

- 1,000,000 ուսլ. Զանէս Գրիգորեան՝ իր ծնողների՝ Սերոբի
եւ Հռիփսիկի յիշատակին

- 500,000 ուսլ. Մանել Բաղդասարեան

- 400,000 ուսլ. Արթին Սարգսեան

- 300,000 ուսլ. Էմիլի Ադոյեան

- 200,000-ական ուսլ. Սաթենիկ Աւետումեան՝ իր մօր՝ Աշ-
խարհուի Խաչատրեանի յիշատակին, Ֆրիդա Քեշիշեան, Գեփիկ
Ասատրեան, Անդրանիկ Ասատրեան, ոմն

- 100,000-ական ուսլ. Համասիիտ Մարգարեան-Աբրահա-
մեան, Ծովիկ Իսախանեան-Մկրտչեան՝ Յովսէփ, Սուրիկ, Ծաղ-
կուշ, Անուշ եւ Ասօ-ի անուհից, Բագրատ Սիմոնեան, Գառնիկ
Յովհաննէսեան, Յարութ Քեշիշեան, Արտուշ Յակոբեան, Վար-
դան, Ռիթա եւ Մարինէ Մկրտչեաններ, Իսկուհի Ծահիջանեան,
Կարապետեան, Վանիկ Աբդալեան, Խորէն Խուրավերդեան,
Թահմազեան, Ռիմա Դիլանչեան, Անուշ Դիլանչեան, Սիմո-
նեան, Թումաթարեան ընտանիք, Արմօ եւ Արամէ Ասատրեան-
ներ

- 50,000-ական ուսլ. Տիգրանուհի Թորոսեան, Լեոմոնդ
Թահմազեան, Անգիլնէ Հայրապետեան, Արաքօ Յովսէփեան

Ս. Աստուածածին եկեղեցի, Ս. Աստուածածնի տօնի առթիւ

- 1,000,000-ական ուսլ. Տիգրանուհի Ղեւեան, Քարմէն, Ծա-
քէ եւ Ադրինէ Ղեւեաններ

- 500,000-ական ուսլ. Ալլա Խուրաբախշեան, Մառիթթ Խո-
ջամալեան, Պօղոս Թահմազեան, Սերոժ Ծահիջանեան

- 300,000 ուսլ. Հայկազ եւ Ծաղկուշ Դաւթեաններ

- 200,000-ական ուսլ. Անիթա Ալեքսանդրեան, Արաքս
Առաքելեան, Լորիթա Գալստեան, Մարօ Բաղումեան

- 150,000-ական ուսլ. Բալաս Դիլանչեան, Վահիկ Ծառու-
րեան

- 100,000-ական ուսլ. Սօսէ, Սիւնէ եւ Սարինէ Ղարիբեան-
ներ, Օֆիկ Փուլարեան

Ջանազան նիւրաանութիւններ

- Մէլ պատի ժամացոյց. Յովհաննէս Մարկոսեան եւ Սեդա
Խուրավերդեան՝ Ս. Մինաս եկեղեցուն

- 72 հատ թէլի բաժակ եւ 5 հատ շաքարաման. Էդուին եւ Սե-
դա Ծահիջանեաններ՝ իրենց զաւակների՝ Անիի եւ Թենիի մկրտու-

թեան առթիւ Ս. Մինաս եկեղեցուն

- 30 հատ թէլի բաժակ եւ 5 հատ սափոր (1,000,000 ուսլ ար-
ժողութեամբ). Մալեքի ընտանի՝ Էրիկնէ Մալեքի յիշատակին՝ Ս.
Մինաս եկեղեցուն

- 6 հատ փոքր ջրի սափոր. Մասիս Մկրտչեան՝ ընտանեօք՝
իր հօր՝ Գալստան Մկրտչեանի յիշատակին՝ Ս. Մինաս եկեղե-
ցուն

Հանգուցեալ Աննիկ Դաւթեան-Յակոբեանի յիշատակին

- 500,000-ական ուսլ Վրէժ եւ Սիլա Յովսէփեաններ, Արա-
րատ Մելիքեան, Արթին Դաւթեան

- 300,000-ական ուսլ. Արա Ամրանեան, Հայկուշ Խաչի-
կեան, Տիգրանուհի Ղեւեան

- 200,000-ական ուսլ. Գալստան Թորոսեան, Պօղոս Սա-
րեան, Դաիթ եւ Սիւնէ Յովսէփեան

Հանգուցեալ Երևանդ Թահմազեանի յիշատակին

- 400,000 ուսլ. Գառնիկ եւ Սոնիա Մարկոսեաններ

- 200,000-ական ուսլ. Հաբեթ Ղարադաղեան, Էլիին եւ Ար-
շաւու Տէր Մկրտչեաններ, Արմէն Տէր Մկրտչեան, Հայկուշ Պօ-
ղոսեան, Վիգէն Մարգարեան, Անուշաւան եւ Հրանուշ Աղաբա-
բալեաններ

- 150,000 ուսլ. Հրաշ Սիմոնեան

- 100,000-ական ուսլ. Մեսրոպ աւ. քննչ. Գալստանեան,
Մասիս Քեշիշեան, Ծաղկուշ Աբէլեան, Գրիշ Թորոսեան, Ռազ-
միկ Գալստանեան

- 50,000-ական ուսլ. Համասիիտ Մարգարեան, Մինաս Տէր
Մկրտչեան

Հանգուցեալ Էդուարդ Ալազրաբալեանի յիշատակին

- 1,000,000-ական ուսլ. Էդիկ Ալազրաբալեան, Հայկազ եւ
Ծաղկուշ Դաւթեաններ

- 500,000-ական ուսլ. Յարութ եւ Ժանեթ Ղուկասեաններ,
Սիմոն Ղարախանեան

- 350,000 ուսլ. Անի Համալիրի բնակիչներ

- 300,000 ուսլ. Սաքօ եւ Աննիկ Սիմոնեաններ

- 200,000-ական ուսլ. Դիանա Ղարախանեան, Կարօ Ծահ-
բազեան, Մասիս եւ Լուիզա Յովհաննէսեաններ, Բաղդասարեան,
Րաֆֆի Խուրավերդեան, Զաւէն Սիմոնեան

- 150,000-ական ուսլ. Գրիշ Թորոսեան, Վարդգէս Պետրո-
սեան, Ծաքէ Ղարիբեան

- 100,000-ական ուսլ. Նարդ Վարդանեան, Վահիկ Ալա-
զեան, Ժենիկ Ղազարեան

Հանգուցեալ Նորիկ Աղախանեանի յիշատակին

- 500,000 ուսլ. Սասուն Մարկոսեան եւ Սեւակ Թահմազեան

- 300,000 ուսլ. Ծահիկնշահրի «Նարեկ» երգչախումբ, Մասիս
Ղազարեան

- 200,000-ական ուսլ. Զօրիկ Յարութիւնեան, Ռոբերթ Յա-
րութիւնեան, Աւօ Յարութիւնեան, Լուսիկ Յակոբեան, Յովհան-
նէս Խուրավերդեան

- 150,000 ուսլ. Մասիս Ծահբազեան

- 110,000 ուսլ. Ծաղկուշ Աբէլեան

- 100,000-ական ուսլ. Ռազմիկ Գալստեան, Երանդ Խաչի-
կեան, Ծահիկն Կիրակոսեան

- 50,000-ական ուսլ. Անահիտ Թահմազեան

**Հանգուցեալ Զաքէլ Հայրապետեան-Թորոսեանի յիշատա-
կին**

- 500,000 ուսլ. Սերոժ եւ Մարօ Տէր Յովհաննէսեաններ

- 200,000-ական ուսլ. Արտուշ եւ Մարգարիտ Սիրջանեան-
ներ, Սաքօ եւ Ռիմա Տէր Յովհաննէսեաններ

- 150,000-ական ուսլ. Վազգէն Անդրէասեան, Գալուստ եւ
Ժենիկ Դիլանչեաններ

- 100,000-ական ուսլ. Մուշեղ Ղարիբեան, Երանդ Խաչի-
կեան, Սերոժ Աւանչեան, Սարօ Ծահբազեան, Փայլակ Յակո-

բեան, Փիրայր եւ Այդա Ղարիբեաններ, Վարուժ եւ Սթելլա Վարդանեաններ, Ռիմա Դիլանչեան
- 70,000 ուսուցիչ. Մասիս Դիլանչեան

Ն.Զ. Հայոց գերեզմանասան բարեպարոյման մարմին

- 1,000,000 ուսուցիչ. Ղազար եւ Իշխանուհի Ղազարեաններ՝ Ասլան, Սողոմ եւ Մարո Ղազարեանների յիշատակին
- 500,000 ուսուցիչ. Անի եւ Արփի Յակոբեաններ՝ Թագուշ Յակոբեանի յիշատակին, Պօղոս Թահմազեան Արմենուհի Թահմազեանի յիշատակին, Վազգէն Թահմազեան Արմենուհի Թահմազեանի յիշատակին, Վազգէն եւ Ադիկ Թահմազեաններ՝ Սաքօ Զարգարեանի յիշատակին, Սուրբ Մինասեան, Աննիկ Մինաս-Խաչիկեան՝ Անդրէ Վարդանեանի յիշատակին, Մարգօ Մինաս-Խաչիկեան՝ Էդարդ Այւազբալեանի յիշատակին
- 300,000 ուսուցիչ. Ռուբէն Մարկոսեան

Ն.Զ. Հայ կանանց գործերան միութիւն

- Զանազան ուսուցիչներ Ծերանոցի օգտագործման համար. Մանուշ Ղուկասեան, Ժաննէ Ինիկեան, Մարո Դարաբիրեան, Այդա Աղախանեան, Անի Մարտիրոսեան, Վերժիկ եւ Վիկուշ Գորգիլեաններ՝ իրենց մօր՝ Արշիկ Քիւիշեանի մահուան տարելիցի առթիւ, Մարջիկ Խուրապետեան, Լորիկ Մագասարեան, Լորեթա Գալստեան, Սոֆիկ Պօղոսեան, Ադրինէ Ետողբեան, Վերժիկ Թորոսեան, Արմինէ Թորոսեան, Արաքս Թահմազեան, Ալիս Ասատրեան, Անահիտ Օհանեան, Քրիստ Պօղոսեան, Արաքս Թահմազեան, Ալիս Ասատրեան, Էլիզա Մարտիրոս, Կակաշ Ծատուրեան, Թալին Մովսիսեան, Լուսին Մինասեան, Գեօզալ եւ Բալասան Ղարիբեաններ, Փաւել եւ Ադրինէ Պօղոս, Անթոն Ինիկեան, Հայկազ Համբարձումեան, Հայկազ Ծահնազարեան, Արսէն Ծահրազեան, ոմն՝ հոգեճաշ Ծատուր Ծատուրեանի մահուան 40-օրեակի առթիւ, Բահուամի, Ֆալլաֆ-փուռ, Ահմադ Բաղէտի, Նազանին Ծաֆիի
- 4,000,000 ուսուցիչ. Դիանա Ղազարեան՝ «Տարեցների Տարւալ» առթիւ
- 1,500,000-ական ուսուցիչ. Իշխանուհի Գրիգորեան, Լինէթ եւ Համլէթ Ռոնանեաններ
- 1,000,000-ական ուսուցիչ. Էդրիան Ծաֆուզեան եւ Ծահէն Օհանեան, Սոֆիկ Պօղոսեան եւ Լորեթա Գալստեան, Ադիկ եւ Էլիսի Ռոստոմեաններ՝ Ժուլիէթ Լալազարեանի յիշատակին
- 500,000-ական ուսուցիչ. Կակաշ Ծատուրեան, Վիկուշ Գորգիլեան, Լորեթա Գալստեան՝ իր ամուսնու՝ Մասիս Միրզաբալեանի յիշատակին, ոմն:

- 100,000 ուսուցիչ. Արթուր-Համիդ Դեհլուան
 - 300 Ա.Մ.Ն. դոկար. Լորիկ Մագասարեան
- «Տարեցների Տարւան» Նւիրաժ ձեռնարկ**
- 500,000-ական ուսուցիչ. Սեդա եւ Ալլին Աբրալեաններ, Յարութ Քեշիշեան, Զեփիլոս եւ Մելքոմ Մարտիրոսեաններ, Հրանուշ Փանոսեան, Ծաղկանուշ Յովսէփեան, Վարսենիկ Օրօջեան
 - 300,000 ուսուցիչ. ոմն
 - 200,000-ական ուսուցիչ. Հայկուշ Հայրապետեան, Հայկուշ Յակոբեան, Արեւիկ Ալլահվերդեան, Վարդուշ Զարգարեան, Ովսան Այւազեան, Ժաննէ Ինիկեան, Երանդ Խաչիկեան,
 - 150,000 ուսուցիչ. Լուսիկ Մարգարեան
 - 100,000-ական ուսուցիչ. Համասիլոս Մարգարեան, Խաչխաթուն Քեշիշեան, Նարդ Պարսամեան, Օֆիկ Պարսամեան, Փերիկ Թորոսեան, Վարդուշ Ասատրեան, Արեգնազ Տէր Յովհաննեսեան, Նոռա Դաւթեան, Նարդ Վարդանեան, Մերի Մինասթեան, Նարդ Յակոբեան:
 - 50,000-ական ուսուցիչ. Էլմա Խաչեան, Ժեմիկ Թորոսեան

Ծահիղահիրի Հայ Համայնի Վարչութիւն

Առաջնորդ Սրբազան Հօր քահանայական օծման 30-ամեակի առաջնորդութեան 10-ամեակի առթիւ

- 1,000,000-ական ուսուցիչ. «Փերիոյ» կրթասիրաց միութիւն, Ն.Զ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն
 - 500,000-ական ուսուցիչ. «Փերիոյ» կրթասիրաց միութեան Ծահիղահիրի մասնաճիւղ, «Շուշանիկ» երգչախումբ եւ հոգեւոր լսարան, Ա.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Ռազմիկ եւ Արսինէ Անդրիասեաններ, Գէորգ եւ Արմինէ Խաչիկեաններ
 - 300,000-ական ուսուցիչ. Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ծահիղահիրի մասնաճիւղ
 - 200,000-ական ուսուցիչ. Ն.Զ. Հայոց ազգային «Քանաճեան» դպրոց
- Մ. Աստուածածնի սօնի առթիւ**
- 300,000-ական ուսուցիչ. Ալբերթ Քեշիշեան
 - 200,000-ական ուսուցիչ. Երեմ եւ Մագի Յարութեաններ, Հրաչիկ Ալեքսանդրեան, Թեհի եւ Փիւնիկ Յովսէփեաններ
 - 150,000-ական ուսուցիչ. Էլիսի Սոհրաբեան
 - 100,000-ական ուսուցիչ. Հենրիկ Հայրապետեան, Արշամ Խուրապետեան, Յովհաննէս Խուրապետեան

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծահիղահիրի մասնաճիւղ

- 500,000 ուսուցիչ. Ռոբերթ Քեշիշեան

Առաջնորդարանին եւ ազգային կառույցին առնչուող յոյսերն ու թղթակցութիւնները պատրաստուած է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող յոյսերը՝ «Ալիք»-ի թղթակցները, «Արարատ» Միութեան առնչուող յոյսերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինշահի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Այդա Մուրադեանը:

Որոշ ծրագրերի յոյսանկարները տրամադրուած է պրն. Գեւիկ Խաչատրեանը:

ՄԵՐ ՀԱՍՅԷՆ

خليفة گري ارامنه جلفای اصفهان
و جنوب ايران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjughai.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98 311 6243471-2
Fax: +98 311 6270999



ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ
Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ
Ս. ՅՈՎԱԷՓ ԱՐԵՄԱԹԱՅԻ
ԵԿԵՂԵՅԻ